«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 8
AOUT
1930
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Տաճկահայաստանի լեռներն ու ձորերը նորից թնդում են հրացանների, գնդացիրների եւ թնդանօթների որոտով: Նորից հրդեհուած գիւղեր, տարագրուած բազմութիւններ եւ դիակներ, անհամար դիակներ մեր ապաբախտ գաւառներում:

Գործողութիւնների թատերաբեմի վրայ չկայ այլեւս երկրի բնիկ տէրը — հայը: Նրա օջախները վաղուց են ամայացած եւ թափուր բնակչութիւնից: Եւ այս անգամ հայի արիւնը չէ, որ ողողում է հայրենի հանդն ու արտը, սարն ու դաշտը: Նրա փոխարէն քուրդն է կանգնել այժմ այդ երկրի մէջ՝ կուրծք տալու թիւրքական հորդաներին:

Քիւրդը՝ որ երէկ անգիտակից գործիք դարձաւ այդ հորդաների ձեռքին՝ նրանց հայաջինջ քաղաքականութիւնը իրականացնելու համար: Քիւրդը՝ որին դեռ երէկ կարելի չեղաւ հասկացնել, թէ Թիւրքիան թշնամի է իր սահմանների մէջ ընկած բոլոր այլացեղ ժողովուրդների համար — լինեն նրանք քրիստոնեայ թէ մահմեդական — որպէսզի նա այնքա՜ն օրհասական դեր չկատարէր մեր ազատագրական պայքարների ժամանակ...

Պարագաները փոխուել են հիմնովին, եւ այսօր քիւրդը իր վիճակի գիտակցութիւնն ունի այլ եւս: Նա տեսնում է, որ Թիւրքիան սլաւոնական, յունական, հայկական եւ արաբական հոծ զանգուածներից զրկուելուց յետոյ, իր ընչաքաղցութիւնն ու արիւնառուշտ բնազդները յագեցնելու համար, ճանկերն ու ժանիքներն ուղղել է դէպի լազերը, ասորիները, չերքեզները եւ մանաւանդ դէպի քիւրդերը, որոնք ներկայիս ամենաստուար եւ ամենաբարեկեցիկ փոքրամասնութիւնն են կազմում Անատոլիայում: Եւ, խրատուած ուրիշ ազգերի փորձերից, խրատուած մանաւանդ հայ ժողովրդի ողբերգական փորձից, քիւրդն այսօր կռուի դաշտն է նետուել: Կռուի դաշտն է նետուել ոչ միայն իր ինչքն ու կեանքը պաշտպանելու, այլ եւ թիւրքական իշխանութիւնը Հայաստանի եւ Քիւրդիստանի սահմաններից իսպառ դուրս մղելու ծրագրով:

Մենք ուշի ուշով հետեւում ենք այս կռուի ելեւէջներին 1925-ից սկսած, երբ քրդութիւնը առաջին անգամ ազգային-ազատագրական պայքարի դրօշը պարզեց Շէյխ Սաիտի ղեկավարութեամբ:

Հետեւում ենք, եւ չենք կարող չհետեւել, նախ եւ առաջ այն պատճառով, որ քիւրդ-թիւրքական գոյամարտը կատարւում է, այսօր գոնէ, մեծ մասամբ հայկական հողերի վրայ: Հողեր, որոնցից հայ ժողովուրդը չէ հրաժարուել եւ չպիտի հրաժարուի, ցորչափ նրա մէջ չէ մարած ազգային արժանապատուութեան զգացմունքը, եւ կենսունակ հայրենիքով ինքնուրոյն ազգ դառնալու իղձը:

Թո՛ղ կապիտալիստական պետութիւնները իրենց հանգիստն ու շահերն ապահովելու համար, «պարկեշտօրէն» անտես առնեն մեր հողային պահանջները Թիւրքիայից: Թո՛ղ «սոցիալիստական» խորհրդային իշխանութիւնը անպատկառօրէն շարունակէ հաւաստիացումներ տալ Մուստաֆա Քեմալին, թէ ինքը, համաձայն Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերի, Տաճկահայաստանը Թիւրքիայի անկապտելի սեփականութիւնն է համարում: Վերջապէս, թո՛ղ մեր անողնայար պատեհապաշտները, իրենց անձնական հանգիստն ու քսակը անձեռնմխելի դարձնելու համար, բոլոր բեմերից հայ ժողովրդին համակերպութեան քարոզներ կարդան, քարոզներ, որոնք գործնականում այլ բան չեն նշանակում, բայց եթէ համակերպութիւն այն ծրագրին, որի իրականացման համար Էնվէրն ու Թալէաթը, Մուստաֆա Քեմալն ու Քեազիմ Կարաբէքիրը մէկ միլիոնից աւելի հայ ջարդեցին...

Հայ ժողովուրդը, որ ընդամէնը մի սերունդի կեանքի ընթացքում ականատես եղաւ, թէ քանի՜ քանի՜ դահեր խորտակուեցին, պե-

digitised by A.R.A.R.@

տութիւններ քայքայւեցին եւ դաշնագրեր ոչնչացան՝ այսօրւայ քաղաքական կացութեան պատճառով չպիտի հրաժարւի իր արդար իրաւունքից: Նա, յանձինս իր անձնազոհ եւ հայրենասէր զաւակների, արհամարհանքով անցնելով համակերպութեան վատոգի քարոզիչների մօտից, շարունակում է եւ պէտք է շարունակէ արիւնների հայրենիքի ազատութեան պայքարը այն բոլոր միջոցներով, որ կրնձեռեն նրան ժամանակի եւ տեղի պայմանները:

Եւ որովհետեւ այս պայքարի յաջողութեան տեսակէտից բնաւ միեւնոյնը չէ, թէ վերջ ի վերջոյ ո՛ւմ ձեռքը պէտք է մնան մեր տաճկահայկական գաւառները եւ ո՛ւմ հետ պէտք է գործ ունենանք մեր դատի հաշւեհարդարը կատարելիս, դրա համար էլ հարկադրւած ենք գործօն հետաքրքրութեամբ հետեւելու այդ գաւառների մէջ եւ նրանց շուրջը մղւող քիւրդ-թիւրքական կռիւներին:

Մենք հետեւում ենք այդ կռիւներին եւ այն պատճառով, որ նրանք խանգարում են Տաճկահայաստանը թիւրք գաղթականներով (միւհաճիր) լցնելու ծրագիրը, որ յամառօրէն հետապնդւում է Մուստաֆա Քեմալի կառավարութեան կողմից, Լօզանի դաշնագրից ի վեր: Արդէն Շէյխ Սաիտի ապստամբութիւնը խիստ զգալի հարւած հասցրեց այդ ծրագրին՝ մեր մի քանի գաւառներում հաստատւած թիւրք գաղթականութիւնը քամու բերանը տալով, իսկ նրանից յետոյ, Հոյբունի առաջ բերած շարժումները փաստօրէն ի չիք դարձրին գայն՝ թոյլ չտալով, որ Թրակիայից, Ռումանիայից եւ Բուլղարիայից բերւած թիւրք գաղթականութիւնը Իզմիրից արեւելք շարժւի:

Ով գիտակցում է թէ ի՛նչ ահռելի վտանգ է ներկայացնում Տաճկահայաստանը ազգագրականապէս թիւրքացնելու այս քաղաքականութիւնը — վտանգ թէ՛ այդ հողերի վրայ ունեցած մեր իրաւունքների համար եւ թէ՛ Անդրկովկասի հայ ժողովրդի ապահովութեան համար — անշուշտ համաձայն կը լինի մեզ հետ, որ եթէ քիւրդական շարժումներն ուրիշ. որեւէ այլ շահեկանութիւն չունենային՝ այս մի հատիկը մենք պէտք է բաւական նկատէինք՝ արտակարգ ուշադրութեամբ հետեւելու նրանց ընթացքին:

Սակայն, մենք մի երրորդ տեսակէտից եւս կենսապէս շահագրգռւած ենք այդ շարժումներով: Նրանց թատերաբեմն է հանդիսանում այն մեծ ճանապարհը, որ տանում է Թիւրքիայից դէպի պարսկական Ատրպատականը եւ ասիական Ռուսաստանի որոշ մասերը, ուր հաստատւած են թիւրք-թուրանական ցեղերը: Այս ցեղերն իր հետ միացնելու եւ իր կմախքացած ազգային մարմինն ուժեղացնելու ծրագիրը Թիւրքիայի արտաքին քաղաքականութեան առանցքն է կազմում մի քանի տասնեակ տարիներից իվեր: Իթթիհատական Թիւրքիան, թուրանական ցեղերի միացման ճանապարհը բանալու համար՝ մաքրեց Տաճկահայաստանը հայութիւնից, իսկ քեմալական Թիւրքիան, որ այս խնդրում քայլ առ քայլ ընթանում է Իթթիհատի հետքերով՝ Կարսի դաշնագրով իր քաղաքական հակակշռի տակ առաւ Նախիջեւանը, որպէսզի նրա վրայով ազատ յարաբերութիւններ ունենայ Ազրբէջանի հետ:

Թէ ինչ վտանգ է սպառնում այս ծրագիրը մեր հայրենիքին եւ նրա ներսն ու շուրջը ապրող հայութեանը — սա պարզ է առողջ դատողութիւն ունեցող ամէն մի հայ մարդու համար, եթէ միայն նրա քաղաքական մտածողութիւնը մթագնած չէ հայ բոլշեւիկների եւ նրանց արտասահմանեան արբանեակների անհիմն յոյսերով, թէ ռուսները միշտ պէտք է մնան Անդրկովկասում մեզ թիւրքական ներխուժումից պաշտպանելու համար...

Եւ ահա մեր աչքի առաջ ուրւագծւում է մի նոր պատւար թիւրքերի եւ թուրանական միւս ցեղերի միացման ճանապարհին — մի պատւար, որ եթէ իրականութիւն դառնայ, թիւրքական վտանգը իր նւազագոյն աստիճանին կիջնի մեզ համար: Այդ պատւարը ուրւագծւում է մեզ համար Քիւրդիստանը Թիւրքիայից իսպառ անջատելու եւ անկախ պետութիւն դարձնելու ձեւով: Եւ որովհետեւ քիւրդական շարժումները հէնց այս ծրագրով են ղեկավարւում, ուստի եւ մենք կենսապէս շահագրգռւած ենք նրանց յաջողութեամբ:

Այս ամէնը շատ լաւ յայտնի է Թիւրքիայի վարիչներին: Նրանք քաջ գիտեն, որ մեր առանձնակի շահագրգռութիւնը քիւրդական հարցով բխում է այն անել կացութիւնից, որին մատնւած է հայ ժողովուրդը: Բաւական չէ, որ մեզնից խլել են հայրենի հողերի մեծ մասը, այլ եւ ծրագրներ են որոճւում տափան դարձնելու Հայաստանի վերջին անկիւնը, որպէսզի թիւրք-թաթարական ցեղերը մեր ամբողջական հայրենիքի դիակի վրայով ազատ երթեւեկ անեն: Ինչպէ՞ս կարող է այս պայմաններում գտնւող մէկը անտարբեր մնալ դէպի ո՛եւէ գործ, ո՛եւէ ձեռնարկ, որ թէկուզ հեռաւոր կերպով փրկութեան յոյս է ներշնչում:

Կրկնում ենք, Թիւրքիայի վարիչներին յայտնի է ոչ միայն մեր բարեացակամութիւնը դէպի քիւրդերի ազատագրական շարժումը, այլ եւ այդ բարեացակամութեան իսկական պատճառները: Եւ եթէ նրանք, մեր այս վերաբերմունքը «բացատրելու» համար, իրենց մամուլի մէջ խօսում են ինչ որ արտաքին ազդեցութիւնների մասին, որոնց մենք իբր թէ ենթարկւած ենք — սա ոչ այլ ինչ է, բայց եթէ վրան-բաց թիւրքական ԲԼԸՖ՝ արտա-

digitised by A.R.A.R.@

սահմանեան հանրային կարծիքը մոլորեցնելու համար:

Հայ ժողովուրդը ակնարկուած «արտաքին ազդեցութիւնների» արժէքը չա՛տ թանկ գնով եւ չա՛տ լաւ է հասկացել՝ այլ եւս երբեք նրանց ականջ չկախելու համար: Դեռ աւելին կասենք.— եթէ կայ մի բան, որ կարող էր նրան թերահաւատ դարձնել դէպի ո՛եւէ թէկուզ խիստ դրական գործ — դա կ՚ըլինէր հէնց այդ «արտաքին ազդեցութիւն» կոչուած չարիքի ներկայութիւնը տուեալ գործի մէջ. մի չարիք, որից մեր ժողովուրդը սարսափում է ինչպէս ժանտախտից:

Եւ ուրախ ենք հաստատելու, որ նոյն այս վերաբերմունքն ունին դէպի «արտաքին ազդեցութիւնները» նաեւ մեր հայրենակից քիւրդերը, որոնք այսօր, զէնքը ձեռքին, կեանքի ու մահուան կռիւ են մղում Թիւրքիայի դէմ: Հայկական Դատի չարաղէտ փորձերից հրահանգուած՝ նրանք իրենց յոյսը բացառապէս իրենց վրայ են դրել, լաւ գիտակցելով, որ «արտաքին ազդեցութիւն» բանեցնողներից ամէն մէկը քրդական հարցին մօտենում է այն նկատումով միայն, որ այդ հարցը ծառայեցնի իր թագուն նպատակներին եւ ապա, քամուած լեմոնի պէս, մի կողմը նետի: Կարիք չունենք նաեւ թագցնելու, որ այս գիտակցութիւնը մարտնչող քրդութեան սեփականութիւնը դարձնելու գործում բաւական խոշոր դեր են կատարել հայ քաղաքական գործիչները՝ ամէն առիթիւ զգուշացնելով նրան «արտաքին ազդեցութիւնների» սադրանքներից, որոնք փորձում էին քրդական շարժումը շեղել իր բուն ազգային–ազատագրական հունից եւ քաղաքական մաքիավելլիութիւնների կամ իմպերիալիստական դաւերի գործիք դարձնել:

Քրդական հարցի նկատմամբ ունեցած մեր հետաքրքրութեան եւ համակրանքի շարժառիթները չեն սպառւում, սակայն, վերեւ մատնանշուած ազգային–քաղաքական հաշիւներով, որոնք բացառապէս հայկական բնոյթ ունին: Այդ հաշիւներից դուրս եւս մենք դրական վերաբերմունք ունինք դէպի քրդական հարցը:—

Քրդերը՝ ազգային մի պատկառելի հաւաքականութիւն Թիւրքիայի պայմաններում եւ կենտրոնացած հոծ զանգուածներով բուն Քիւրդիստանի մէջ, ուր Թիւրքերը եւ այլ ազգագրական միութիւնները չնչին փոքրամասնութիւն են կազմում, ցանկանում են անկախ ազգային պետութիւն կազմել իրենց համար: Անկախութեան այս ձգտումը ժամանակին յայտարարուած է քիւրդ ղեկավարների միջոցով, թէ՛ խաղաղութեան վեհաժողովներին, թէ՛ Ազգերի Լիգային և վաւերացուած միջազգային ակտերով, ի միջի այլոց նաեւ Սեւրի դաշնագրով: Քեմալական յեղաշրջումից յետոյ համոզուելով, որ խաղաղ միջոցներով չպիտի կարողանան իրականացնել այս ձգտումը՝ քիւրդերը սկզբում Շէյխ Սաիտի առաջնորդութեամբ, իսկ յետագային իրենց ազգային կազմակերպութեան — Հոյբունի ղեկավարութեամբ, ապստամբութիւնների դիմեցին եւ արեան հեղեղներով ապացուցեցին, որ անկախութեան պահանջը մահուան եւ կեանքի խնդիր է իրենց համար եւ ոչ թէ քիւրդ երեւելիների կողմից յղացուած մի ցնորամիտ երազ: Այսօր էլ, եթէ Արարատի փէշերից մինչեւ Տերսիմ եւ մինչեւ Բիթլիս գետերով արիւն է հոսում, եթէ այդ ընդարձակ տարածութեան վրայ ապրող քիւրդ ցեղերը, մոռանալով երէկուայ ներքին ներհակութիւններն ու թշնամութիւնները, միացեալ ճակատ են կազմել Թիւրքերի դէմ՝ դրա պատճառն այն է միայն, որ նրանք գերադասում են բնաւ չապրել, քան թէ ապրել Թիւրքական լծի տակ:

Այսքան զոհողութիւններով նուիրագործուած ազգային անկախութեան մի պահանջ, ո՛ւմ կողմից էլ արտայայտուէր եւ ո՛ր երկրամասում էլ արտայայտուէր՝ մեր անկեղծ համակրանքին պիտի արժանանար: Որովհետեւ մեզ համար ազգերի ինքնորոշման իրաւունքը սին խօսք չէ միայն՝ մէջ տեղ նետուած գաղանի դիւանագիտութեան խաղերը քօղարկելու կամ սրա ու նրա աչքին փոշի ցանելու համար, այլ մի սրբազան սկզբունք, որից չենք կարող հրաժարուել առանց մեր ժողովրդապետական եւ ընկերվարական դաւանանքներին դաւաճանելու:

Սակայն, քիւրդերի անկախութեան պահանջը առանձին ջերմութեան համակրանք է առաջ բերում մեր մէջ, որովհետեւ այդ պահանջն առաջադրւում է մի պետութեան, որ իր հիմնադրութեան առաջին օրերից սկսած միայն արիւն, աւեր եւ թշուառութիւն է պատճառել հպատակ բոլոր ժողովուրդներին: Չկայ մի հատիկ ժողովուրդ, որ Թիւրքական իշխանութեան տակ ծաղկէր ու փթթէր, եւ ընդհակառակը, այն բոլոր ժողովուրդները — սերբ, ռումէն, յոյն, բուլղար, արաբ, ալբանացի եւն—որոնք յաջողել են թօթափել Թիւրքական անարգ լուծը, օր ըստ օրէ յառաջդիմելով, քաղաքակիրթ ազգերի շարքն են դասւում:

Հերթը հասել է հիմա քիւրդերին: Սրանք եւս եկել են այն եզրակացութեան, որ Թիւրք պետութեան սահմաններում փրկութիւն չկայ իրենց համար, որ Թիւրքը լինի նա խալիֆայական թէ քէմալական, սուլթանական թէ հանրապետական — միշտ նոյն Թիւրքն է՝ պորտաբոյծ շահագործողի, անյագ ընչաքաղցի եւ արիւնարբու վայրենիի բնազդներով ու հակումներով: Եւ «արդիացած», «հանրապետական» Թիւրքիան, կարծէք հաստատելու համար այս եզրակացութիւնը՝ քիւրդերի ա—

digitised by A.R.A.R.@

ղատագրական ձգտումներին պատասխանում է գիւղերի հրկիզումով, մանուկների սրածութիւնով, կանանց բռնաբարութիւններով եւ կռւի դաշտից դուրս գտնուող ազգաբնակութեան զանգուածային ջարդով…

Սակայն, ինչպէս որ նման բարբարոսութիւններով ժամանակին կարելի չեղաւ կասեցնել սերբերի, յոյների, բուլղարների և թիւրքական բռնապետութեան դէմ ծառացած միւս հպատակ ազգերի յեղափոխական շարժումները, նոյնպէս եւ անկարելի է լինելու, խեղդել քիւրդական յեղափոխութիւնը: Թո՛ղ հայկական ջարդերի օրինակը շատ չոգեւորէ թիւրքերին: Այսօր չկան այլեւս համաշխարհային պատերազմի պայմաններն ու արհաւիրքները, որոնք այնքա՛ն օրհասական դեր կատարեցին հայ ժողովրդի դիմադրական կորովը անդամալուծելու համար: Բացի այս՝ քրդերի վիճակը շատ է տարբեր հայկականից եւ բնաջնջումի այն մեթոդները, որ կիրառուեցան հայերի նկատմամբ, հազիւ թէ կարելի լինի կիրառել քրդերի դէմ, որոնք գործում են բոլորովին այլ պայմաններում եւ կռւող ուժերի այլ փոխյարաբերութեան մէջ:

Անշուշտ, սրանով չենք ուզում ասել, թէ քրդական ներկայ ապստամբութիւնն անպատճառ պէտք է յաջողւի: Կարող է պատահել, որ նախորդի պէս, այս ապստամբութիւնը եւս ընկճւի: Կարող է պատահել, որ երեք–չորս յաջորդական նոր ապստամբութիւններ էլ պարտութեամբ վերջանան: Բայց ամէն մի պարտութիւնից մարտնչող քրդութիւնը դուրս պիտի գայ աւելի՛ եւս փորձուած ու թրծուած յեղափոխական պայքարի համար, աւելի՛ եւս տոգորուած վրէժի զգացմունքով դէպի անագորոյն թշնամին եւ աւելի՛ եւս ծարաւի ապստամբութեան եւ անկախութեան:

Ասում են, թէ Թիւրքիայի այժմեայ վարիչները մեծ եռանդով ուսումնասիրում են իրենց պետութեան հին պատմութիւնը: Խորհուրդ կը տայինք նրանց աչքաթող չանել նախկին Թիւրքահպատակ ժողովուրդների ապստամբական պայքարները, որոնք Թիւրքական պատմութեան մէջ ընդարձակ էջեր են գրաւում: Այս պայքարները ընկերաբանական մի մեծ խրատ են պարունակում իրենց մէջ, որին եթէ Թիւրքիոյ վարիչները շիտակօրէն հետեւեն՝ միանգամայն խնայուած կը լինի մարդկային այն արիւնը, եւ առաջին հերթին թիւրքական արիւնը, որ այնքա՛ն առատօրէն հոսում է Հայաստանի ու Քիւրդիստանի լեռներում…

# ՔՐԴԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄԻՑ

## ՆԱՄԱԿ

### ԹԻՒՐՔ–ՔՐԴԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄԷՆ

…… (գիւղ)· 27 Յունիս 1930

….. Դառնանք քիւրդ–թիւրքական կռիւներուն:

Այս կռիւներու մասին, չգիտենք, լուրեր կը հասնի՞ն ձեզի թէ ոչ: Մեր ձեռքն անցած պոլսական թերթերու մէջ անոնց հետքն իսկ չենք գտներ: Կենթադրեմ թէ արտասահմանի մամուլն ալ, որ մեծաւ մասամբ թիւրքական շրջանակներէն կառնէ իր լուրերը, կարեւորութիւն չի տար քրդական շարժումներու վերաբերեալ լուրերուն: Մինչդեռ ինծի անանկ կուգայ, որ այս շարժումները, ոչ իրենց ծաւալով և ոչ ալ ուժգնութեամբ, բնաւ յետ չեն մնար Մարոկի և Սիւրիոյ ապստամբական շարժումներէն, որոնց լուրերով ատեն մը եւրոպական թերթերը կը հեղեղէին…

Կռիւներու սկզբնաւորութեան մասին գրած եմ ձեզ ժամանակին*): Այսօր կը սահմանափակւիմ քանի մը լուրերով, որոնք բացառապէս …… շրջանին կը վերաբերին:

Ձեզի ծանօթ (?) առաջին յաջողութիւններէն յետոյ, քիւրտեր կը բռնեն Արաքսի ափ — Արալըխներ — Դաշբուռուն–խճուղի–Զօրա Գետուկ գիծը, ուրկէ քանի մը հարիւր հոգի կուղարկեն ասպատակելու Իգտիրի դաշտը, մինչև Կաղզվան:

Նոյն ատեն անոնք, հարաւի կողմէն, դիրք կը բռնեն Բայազէտէն երեք քիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող կայարանին դիմաց և այնտեղէն կը տարածուին մինչև Արծափ, Օրգով և Զօր, որով Ալաշկերտը կը բաժնուի Իգտիրէն:

Այս երկու զօրախմբերը կը կազմեն ռազմական գործողութիւններու առաջին ռայոնը, որ ենթակայ է Արարատի անմիջական հրամանատարութեան:

---

*) Դժբախտաբար, այս գրութիւնը մեզ չէ հասել:
ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

*Երկրորդ ռայոնը կընդգրկէ Ալադաղի եւ Թանտուրէքի շրջանները. Հոն 1800 մարտիկներ կը կտրեն Վանէն Ալաշկերտ տանող գիծերը՝ գրաւելով Արաղան, Զիլանը եւ լեռնային գաւառները։*

*Այսպիսով քիւրտեր երկուստեք կը սեղմեն Բայազէտ–Ղարաքիլիսէ գիծը, զոր բռնած են թիւրքական զօրքերը։*

*Մայիսի սկիզբներէն ի վեր, թիւրքերը քանի մը անգամ փորձած են կոտրելու ապստամբներու ոյժը, բայց միշտ անյաջողութեան են հանդիպած։*

*Այս կռիւներուն քիւրտեր ոչնչացուցած են երեք ոստիկանական եւ որսորդական գունդեր եւ ձեռք անցուցած բազմաթիւ զէնքեր եւ մեծ աւար։*

*Կռիւներու ընթացքին ասպատակուած եւ աւերուած են շրջանի թիւրքաբնակ գիւղերը։*

*Թիւրքերու մարդկային կորուստները խիստ ծանր են։ Քիւրտերն ալ բաւականաչափ սպանուածներ տուած են, թէեւ ոչ թիւրքերու չափ։*

*Մինչեւ Յունիս 8-ը թիւրքերը զօրքեր կը կեդրոնացնէին Ալաշկերտ–Իգտիր ուղղութեամբ։ Վեց սաւառնակներ շարունակ հետախուզութիւններ կը կատարէին քիւրտերու դիրքերը եւ մանաւանդ գիւղերը ռմբակոծելով։ Սակայն, ասոնց պատճառած վնասները չնչին են. սպանուած քիւրտերու թիւը 3–4 կիներէ եւ երեխաներէ աւելի չէ։ Այս միջոցին թիւրքերը բազմաթիւ թռուցիկներ կը հրատարակեն՝ կոչ ընելով մահմետական քիւրտերուն, որ անջատուին դաւաճան հայերէն, եթէ չեն ուզեր անոնց վիճակին հասնիլ։*

*Թիւրքական ուժերու այս կեդրոնացումը խանգարելու համար, քիւրտեր յունիս 8-ին յարձակման կ'անցնին եւ երկու աւուր կատաղի կռիւներէ վերջ թիւրքերը խիստ ծանր կորուստներով յետ կը մղեն դրեթէ բոլոր կէտերէն։*

Անհերքելի փաստերով ապացուցւած է, որ այս շրջանին մէջ, ռուս պոլշեւիկներ ամէն միջոցաւ կօգնեն թիւրքերուն։ Անոնք վերջիններուն ոչ միայն սաւառնակներ ու ռազմամթերք տւած են, այլեւ Հայաստանի վրայով կը պարենաւորեն թիւրք զօրքերը։ Դեռ աւելին կայ — ապացուցւած է, որ Արաքսի միւս ափով, այսինքն Հայաստանի վրայով են եկած պատերազմի դաշտը թիւրքական այն ուժերը, որոնք Սարդար–Բուլախի կողմէն (երկու Մասիսներու մէջ տեղէն) յարձակումներ կը կատարէին քիւրտերու վրայ…

*Իր անյաջողութիւններէն կատղած, Էնկիւրի ընդհանուր կոտորածի հրաման է տուեր։ Քիւրտեր պարզ կը տեսնան, որ հայկական կոտորածներուն ծրագիրը կախուած է իրենց գլխուն, եւ սա պարագան հարկադրած է քանի մը ցեղեր, որոնք մինչեւ հիմա վերապահ դիրք ունէին, ապստամբներու շարքերն անցնիլ։*

*Ներկայիս կռիւները կը շարունակուին առանձին դիրքերու վրայ, բայց երկու կողմերն ալ կը պատրաստուին վճռական ճակատամարտի։ Գործի յաջողութեան համար անհրաժեշտ է . . . . . . . . . .*

*Նորէն կը գրեմ։*

**ՎԱՀԱԳՆ**

. . . . (գիւղ) 5 յուլիսի 1930թ.

*Արարատի կռիւները վերջանալով թաճիկների պարտութեամբ եւ ընդհանուր ապստամբական շարժում սկսելով Արարատից մինչեւ Սիփան — Արաղա, Կալիէ Զիլան, Արճէշ, Բերկրի, Ախլաթ, Սօւկսու, Զուլամերիկ եւ Վան, թաճիկները Իգդիր–Բայազէտի իրենց ուժերը, յունիս 23-ին, Բայազէտի երկաթուղու կայարանից շարժում են Թանդուրէկ լեռան ուղղութեամբ՝ Վանի շրջանն անցնելու նպատակով։ Իգդիր–Բայազէտի շրջանում իրենց թուլութիւնը քօղարկելու համար, դիմում են խորամանկութիւնների՝ գրաւոր ու բանաւոր սուտ լուրեր են տարածում, որ յարձակուելու են Արարատի վրայ եւ յունիս 23-ի առաւօտեան երեք օդանաւերից ռմբակոծում Արարատի հիւսիսային կողմում գտնուող աշիրէթներին։*

*Ապստամբները գրաւել են Կալիէ Զիլան։ Թաճիկների կողմից սպանուած են 50 հոգի, որոնց թւում նաեւ հարիւրապետներ՝ Քեամիլ եւ Դունէր ու մի քանի յիսնապետներ։ Ապստամբների ձեռքն է անցել՝ մէկ թնդանօթ, երկու խոշոր գնդացիր եւ մեծաքանակ ռազմամթերք։ Կալիէ Զիլանի թաճկական զօրքերը նահանջել են, իսկ ապստամբները շարժուել են դէպի Արճէշ։*

*Ապստամբները Արճէշում ոչնչացրել են 400 թաճկական ասկեարներ։ Սպանուած են նաեւ հրամանատար Քեմալ բէյը եւ Արճէշի գայմագամը։*

*Զուլամերիկի կռւում ապստամբները թաճիկներից գերի են վերցրել մէկ զաբիթ եւ 31 ասկեար։*

*Ապստամբութիւնը օրէցօր լայն ծաւալ է ստանում։*

*Մինչ թաճիկները պատրաստւում էին Արարատի ապստամբներին մահացու հարուած տալու, Զիլանի ըմբոստ աշիրէթները ապստամբական դրօշ են պարզում, ամբողջ Զիլանը մաքրում են թաճիկ պաշտօնէութիւնից ու զօրքերից եւ ապա անցնում Ալադաղի արօտատեղիները։*

*Ապստամբում են նաեւ Աբաղայում, Պաղնոսում եւ իր շրջանում։ Վեց հարիւր ձիաւորներ էլ շարժւում են Բերկրիի ուղղութեամբ, գրաւում եւ հրդեհում են զանազան կէտերում գտնուած պահակատները։*

*Ապստամբների միջնաբերդը խորտակելու ծրագիրը ջուրն է ընկնում։ Թաճիկներն ստիպուած են լինում ուժերը զանազան ուղղութեամբ ուղարկելու, գէթ կենտրոնական վայրերը իրենց ձեռքին պահելու համար։*

*Յունիս 28-ին, Զիլանի ապստամբները, թւով 400 ձիաւոր, շարժւում են դէպի Արճէշ։ Արճէշի շրջանում ապստամբների դէմ են դուրս գալիս 475 կանոնաւոր զինւորներ, 7 օդանաւերով, 2 թնդանօթներով եւ գնդացիրներով։ Յետոյ նրանց միանում է 300 հոգուց կազմուած զինուած խուժանը։ Չորս օր տեւող կռիւներից յետոյ թաճիկները պարտւում են եւ համախմբւում Արճէշում։*

*Արճէշի շրջանը գրաւելուց յետոյ ապստամբները յուլիս 2-ին պաշարում են Արճէշը, կտրում Բիթլիս–Արճէշ եւ Վան–Արճէշ ճանապարհները ու հեռագրաթելերը եւ վեց ուղղութեամբ յարձակւում քաղաքի վրայ։ Թաճիկները Բերկրիից եւ Վանից, ծովի վրայով, օգնական զօրքեր են տեղափոխում Արճէշ եւ քաղաքը*

digitised by A.R.A.R.@

*պաշտպանողների թիւը հասցնում 1800-ի: Պաշարումը տեւում է չորս օր, յուլիս 2-6: Ապստամբներին յաջողւում է գրաւել միայն քաղաքի մի մասը: Տաճիկները Ալաղաղի վրայով դէպի Արճէշ են ուղարկում մի զօրամաս, 500 հոգուց կազմուած, որից 200-ը խուժան, 2 թնդանօթով և վեց գնդացիրներով, ապստամբների թիկունքը անցնելու համար: Ապստամբները ստիպուած են լինում նահանջել երկու ուղղութեամբ, մի մասը դէպի Ալաղաղ, իսկ միւսը՝ Զիլան: Դէպի Ալաղաղ նահանջող ապստամբները կռւի են բռնւում Բայազէտից ուղարկւած զօրամասի հետ: Ամբողջ ցերեկը կռւելուց յետոյ նրանց մի մասը գիշերը անցնում է Զիլան, իսկ միւսը՝ Բերկրի:*

*Արճէշում և իր շրջանում տեղի ունեցած ութ օրեայ կռիւների ընթացքում ապստամբները ցած են բերում չորս օդանաւ և այրում: Նրանց ձեռքն է անցնում՝ 4 մեծ և 32 փոքր գնդացիր, 400 հրացան, 60 հազար փամփուշտ և 318 գերի, որից 18-ը սպայ: Տաճիկների սպանւածների թիւը հասնում է 400-ի, իսկ ապստամբներինը՝ 180-ի:*

*Տաճիկները, ըստ աւանդական սովորութեան, իրենց վրէժը լուծում են Ալաղաղի արօտատեղիներում գտնւող քիւրդ անմեղ ժողովրդից, վայրագաբար սրի անցկացնելով նոյնիսկ կանանց, երեխաներին և ծերերին, շուրջ 15 հազար հոգու:*

*Ալաղաղի աշիրէթները շարժւում են դէպի Թանդուրեկ և հանդիպում տաճիկ զօրքերին, որոնք կտրած են լինում Թանդուրեկ տանող երկու ճանապարհները: 48 ժամեայ կատաղի ճակատամարտից յետոյ տաճիկները փախչում են դէպի Բայազէտ Աղա, իսկ աշիրէթներն անցնում են Թանդուրեկ: Պարտիզանական կռիւները դեռ շարունակւում են:*

Կ.

(Մեր յատուկ թղթակցէն)

· · · 6 Յուլիս, 1930

*Ձեզ գրել էի, որ Արարատից աւելի կարեւոր նկատելով Արճէշ, Մանազկերտ, Զիլան, Աբաղա, Բերկրի, Թանդուրէկ շրջանները — որոնք մի կողմից սպառնալիք են Բայազէտ-Ալաշկերտ հովտին, իսկ միւս կողմից կտրում են Բիթլիս և Վան վիլայէթների կապը — առանձին ապստամբական ռազմաբեմ է դարձած Ջ.-ի համաձայնութեամբ՝ կենտրոն ունենալով . . . . ը:*

*Յունիս 26-ին այս նոր կենտրոնից ստացւեցին հաղորդագրութիւններ, որոնց ճշտութիւնը հաստատւում է և Արարատից հասած տեղեկութիւններով: Նրանց բովանդակութիւնը հետեւեալն է.*

*ա. Թիւրքերը Արարատի շրջանից յետ քաշւեցին և այժմ ուժեր են կենտրոնացնում ապստամբ Գալիէ-Զիլանի, Արճէշի, Թանդուրէկի և Աբաղայի դէմ:*

*բ., գ. . . . . . .*

*դ. Հիւսէյին փաշայի տղան յունիս 21-ին գրաւեց Զիլանը:*

*ե. Աբաղան, Զիլանը, Բերկրին, Արճէշը, Ախլաթը և Սասունն ապստամբւեցին: Յուզումները տարածւում են մինչև Սիփանի ստորոտները:*

*զ. Արճէշում փչացած է 400 զինուոր: Գրաււած են նոյն քանակութեամբ հրացաններ, սպանւած է Արճէշի զայմագամը և թիւրքական ուժերի հրամանատար Քեմալ բէյ:*

*է. Աբաղայի զօրքը յունիս 26-ին քաշւեց դէպի Արճէշ և Վան:*

*ը. Քիւրդերը կենտրոնանում են Արճէշում: Վան դիմող թիւրքական ուժերի դէմն ուղարկւեց Օսման բէյը իր մարտիկներով:*

*թ. Աբաղայի 60 գիւղերը նախապէս զինաթափւած էին և փամփուշտի նեղութիւն են կրում:*

*ժ. Աբաղայի և Բերկրիի ժողովրդի մէկ մասն անցաւ Պարսկաստան........*

*ժա. Օգնական ուժերով ամրացւած է Թանդուրէկը, որի միջոցով կապ է պահպանւում Դիատինի և Դութախի հետ:*

*ժբ. Ըստ* լուրերի *չորրորդ օրն է, որ Կոթուրի կողմից թնդանօթի ձայներ են լսւում: Եթէ լուրերը ճիշտ են, երևի դէպի Սարա երկարող քրդերն են կռւի բռնւել:*

*Արարատի կռիւների մասին դուք արդէն գիտէք, բայց և այնպէս աւելորդ չեմ համարում հաղորդել ձեզ այնտեղի ներկայացուցչից նոր ստացւած հետեւեալ ժամանակագրութիւնը.*

Յունիս 22. *Թշնամին գրաւեց Շէյխ Ալի գիւղի դիմացի բլուրը: Քիւրդերը բռնած են Սինակ լեռները: Թշնամին թռուցիկներով և վարձկան գործակալներով աշխատում է երկպառակութիւն ձգել քիւրդերի մէջ:*

Յունիս 23. *Շէյխ Ալիի բլրի գրաւումը ռազմական խաղ էր թիւրքերի կողմից՝ իրենց նահանջը քողարկելու համար: Այսօր առաւօտեան ժամը 5-ից սկսած, թիւրքական հեծելազօրը Բայազէտի կայարանից յետ քաշւեց Թանդուրէկի և Վանի ուղղութեամբ: Առաւօտեան թիւրքական սաւառնակները ռմբակոծեցին Արարատի հիւսիսային լանջերը:*

Յունիս 24. *Տեղեկացանք, որ Բայազէտ-Մակու գծի վրա ընկած թիւրքական պահակատեղերը պահպանւում են նւազագոյն ուժերով, վարագուրելու համար թիւրքական ուժերի յետ քաշւելը: Բայազէտի ճակատում այսօր մի սաւառնակ փչացրինք: Սաւառնորդը անձկարգելով (պարաշիւտ) ընկաւ մեր դիրքերի մէջ, իսկ սաւառնակն ընկաւ Բայազէտ քաղաքը:*

Յունիս 25 և 26. *Ռազմաճակատում փոփոխութիւն չկայ:*

---

## ԱՐԱՐԱՏԻ ԿՌԻՒՆԵՐԸ

. . . . . 10 յուլիս, 1930թ.

*Կոտիս լեռան լանջերին են գտնւում «Բրնտաշ» և «Բուրնսար» կորդոնները: Վերջինի պաշտպանութիւնը յանձնւած է լինում տաճկական 2րդ սահմանապահ վաշտին: «Բուրնսար»-ը, որպէս Բայազէտի բանալին, վաշտն ուժեղացրած է լինում ռուսական մէկ դաշտային թնդանօթով:*

*Յուլիս 5ի լուսաբացին, Արարատի ապստամբները յարձակւում են «Բուրնսար»ի վրայ: Երեք ժամեայ կատաղի կռւից յետոյ տաճկական ամբողջ վաշտը գերի*

digitised by A.R.A.R.@

է ընկնում և ապստամբների ձեռքն է անցնում՝ ռուսական մէկ դաշտային թնդանօթ, հինգ գնդացիրներ, 45 հրացան, ռազմամթերք, 8 վրան, ձիեր և այլ իրեր։

Տաճիկները կռուի վայրում թողնում են 13 սպանուած, որոնցից մէկը ոստիկան և 6 վիրաւոր։ Իսկ ապստամբները տալիս են՝ 3 սպանուած և մէկ վիրաւոր։

Բայազէտից ուղարկուած օգնական ուժերին չի յաջողւում կռուի վայրը հասնել, որովհետև ապստամբները կտրած են լինում Բայազէտը «Բուրնսոր»ի հետ միացնող ճանապարհը, իսկ տաճկական օգնաւից նետուած ռումբները նպատակին չեն հասնում և ապստամբները ապահով կերպով բարձրանում են լեռը, իրենց հետ տանելով պատերազմական աւարն ու գերիները։

«Իբրահիմը» գրում է Աբաղայից. Ջուլամերիկի կռւում մերոնք գերի են վերցրել մի սպայ և 31 զինւոր։

— Ջիլան Դերէ ղրկուած Մահմուդ բէկը սպանած է յիսուն և գերի է վերցուցած 250 զինւոր։ Ամբողջ զինամթերքը ընկած է մերոնց ձեռքը։ Սպանուած են հարիւրապետներ Թահբիր և Քեամիլ և մի քանի յիսնապետներ։ Մահմուդ բէկ առած է երկու խոշոր գնդացիր, ութ օթոմատիկ։ Ան հիմա կը քալէ Արճէշի վրա։ Հասկցանք, որ Բայազէտ Աղա զօրք է եկած։ Շուտով կերթամ միանալու Մահմուդ բէկին»։

Նամակը յունիս 27-ից է թւագրուած։

Իրաքից Վ. հաղորդում է յունիս 26 նամակով. «Վերջերս Գեաղանցի աշիրէթի կողմէ սպանուած է թիւրք դայմագամը, իսկ .....ը սպանած է թիւրք գործակալ մը։ Թիւրքերը կը խուսափին կռուի մտնելէ»։

Այս լուրը հաստատւում է նաև «Իբրահիմի» և X-ի հաղորդագրութիւններով։ Պէտք է ենթադրել, որ Ջուլամերիկի շրջանում ինքնաբերաբար շարժում է սկսուած, որ թէ զարգանայ՝ կարող է շատ նպաստել ընդհանուր գործի յաջողութեանը։

---

Վերջին պահին ստացայ հետևեալ բօթը Վանից. «Ահա չորս օր է, որ ընդհանուր տեղահանութիւն է կատարած է Աղբակում և Վասպուրականում։ Բոլոր արական սեռին պատկանող քրդերին, դեռահաս պատանիներից սկսած մինչև ծերունիները, հաւաքում և ծովն են թափում թիւրքերը»։

Այսպիսով թիւրքական պատմութիւնը նորից կըրկնւում է, մի անգամ եւս ցոյց տալու համատրած աշխարհին, որ թիւրքը իր հանրապետական հօկախալիֆայական և արդիական դիմակի տակ եւս նոյն հին, արիւնռուշտ թիւրքն է մնացած...

Ա.

# ՔՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

## ԴԷՊՔԵՐԸ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ապստամբութեան պատճառը.— Արարատի և Զիլանի կռիւները.— Թիւրքերու դիտաւորութիւնը.— Ապստամբութեան ծաւալումը.— Թիւրք-պարսկական յարաբերութիւնը.— Ռուսաստանի դերը.— Արարատը միջնաբերդ.— Թիւրքերը 60,000 զինւոր կը կեդրոնացնեն.— Ներկայ կացութիւնը և կռուի նոր փուլը։

Յունիս ամսուան սկիզբները Արարատի շուրջ տեղի ունեցան շարք մը կռիւներ, որոնք միայն յունիս 11-էն յետոյ արձագանգ գտան թրքական և արտասահմանի մամուլին մէջ։ Թրքական աղբիւրներէ առնելով, միջազգային մամուլն ալ շարժումը նկատեց «աւազակային» շարժում մը և նոյնութեամբ վերարտատպեց թրքական հեռագիրները. ըստ այդ հաղորդագրութեանց «աւազակ»ներու մեծ մասը պարսկական հողերէն կանցնէին և կասպատակէին թրքական շրջանները։ Դէպքերը հետզհետէ ծանր բնոյթ ստացան, ու թրքական աղբիւրները ստիպուեցան խոստովանիլ թէ այդ խռովութիւնները լայն ծաւալ մ'ունին, և իբր թէ «յետադիմական» շարժում մըն է՝ ընդէմ քեմալական ռեժիմին։ Դէպքերուն դուզընթաց, միջազգային մամուլը տեղի ունեցած կռիւները քրտական ապստամբութիւն մը նկատեց։ Ու հիմա, թէ՛ թիւրքերը և թէ՛ արտասահմանի քաղաքական բոլոր կարևոր օրգանները ապստամբութիւնը կը նկատեն Քիւրտիստանի ազատագրական շարժումը, որ իր տարողութեամբ՝ պատերազմ մըն է թիւրքերու և քիւրտերու միջև։

Երկուք ու կէս ամիսներէ ի վեր տեղի ունեցած կռիւները թէ՛ ներքին պետական, և թէ՛ արտաքին քաղաքական բարդութիւններ ստեղծեցին և մեծապէս շահագրգռեցին քաղաքական աշխարհը։ Իսկ այդ դէպքերը առանձնապէս նշանակութիւն ունին մե՛զ, հայերուս համար։ Հետևաբար, կարժէ ամփոփ կերպով ներկայացնել ապստամբութեան պատճառները, կռիւներու ընթացքը և ներկայ կացութիւնը։

digitised by A.R.A.R.@

## 1· ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

*Թիւրքիոյ համար, չորս տարիներէ ի վեր, Արարատի քրտական անկախ շրջանը աչքի փուշ դարձած էր: Բայց 1926–ին և 1927–ին թրքական զօրքերու կրած պարտութիւնները, որոշ չափով աչքը վախցուցած էին Թիւրքիոյ, որ ստիպուած էր հանդուրժել այդ ապըստամբ օջախին, ի հարկէ, միշտ ի մտի ունենալով անոր ճզմումը, երբ պարագաները ձեռնտու ըլլային իրեն:*

*Թիւրքերը 1928–ին և 1929–ին ամէն տեսակ դաւադրութիւններ ըրին՝ պառակտելու միացած աշիրէթները և ջանացին ներումներով և չքանչաններով իրենց ցանցին մէջ առնել քիւրտ ղեկավարները: Ըստ երեւոյթին, Թիւրք կառավարութիւնը ինքզինքը ապահով կը զգար միւս շրջաններէն և կը կարծէր թէ քրտական կարեւոր կեդրոնները կապակցութեան մէջ չեն: Ժամանակը հասած նկատեց քրտական հարցը լուծելու զէնքով, քանի որ այդ բանը չէր յաջողած դաւադրութեամբ:*

*Համատարած ջարդը գլուխ բերելու համար, քեմալական կառավարութիւնը ծրագրած էր յարձակիլ առանձին–առանձին շրջաններու վրա, ջախջախել մէկը, ու նոր անցնիլ միւս շրջանին: Այդ ծրագրով, Թիւրքերը կը յուսային հասնել իրենց նպատակին, առանց քրտութիւնն ամբողջ մէկէն ոտքի հանելու: Բնական է, առաջին հարուածը պիտի տային Արարատին, որ դարձած էր քիւրտ յեղափոխութեան հնոցը և սկսած էր իր ազդեցութիւնը տարածել մինչև Տաւրոսի լեռնաշղթան:*

*Արարատի քրտական կազմակերպութիւնը, այս տարուան յունուարէն սկսած, կը հրատարակէ խմորատիպ թերթ մը,* Էկրի *(Արարատ) անունով, որու լոյս տեսած 6 թիւերը, երբ աչքէ կանցնէք, կը տեսնէք, որ Արարատի քրտութիւնը օրը օրին տեղեակ եղած է թրքական պատրաստութիւններուն: Մարտի թիւին մէջ յստակ կերպով նկարագրուած են զինուորական այն շարժումները, որոնք ուղղուած են Արարատի դէմ: Իսկ ապրիլ և մայիս ամիսներուն թրքական բանակի կեդրոնացումը Կարս և Ալաշկերտ վերջացած էին: Արարատը ոգի ի բոլին կը պատրաստուէր ինքնապաշտպանութեան:*

*Բոլոր երեւոյթներէն կերեւի թէ քրտական կազմակերպութիւնները այս տարի ընդհանուր կամ մասնակի ապստամբութեան մը դիտաւորութիւն չունէին, և պիտի բաւականանային իրենց դիրքերը պահելով: Սակայն, թրքական զինուորական իշխանութիւնը, ինչպէս միշտ, այս անգամ ալ ինքը նախայարձակ եղաւ, որպէսզի քրտական ապստամբութիւնը պայթի կանխահաս, ու խեղդուի: Այս շարժումի իսկական դրդապատճառը թիւրք կառավարութիւնն է, ու այդ կապացուցանին մայիսին տեղի ունեցած դէպքերը:*

*Իրենց զօրքերու կեդրոնացումէն յետոյ, Թիւրքերը փորձութեան ենթարկեցին շարք մը շրջաններ, երեւան հանելով անոնց տրամադրութիւնները և ոյժը: Սակայն, քիւրտերը տեղի չտուին, ու բաւականացան փոքրիկ ու պատահական ընդհարումներով: Այսպիսով, Թիւրքերը ապահովուած իրենց կռնակէն, ուժերը կեդրոնացուցին Իգդիր և Բայազիտ՝ հարուածը ուղղելու միայն Արարատի դէմ: Թիւրքերը կը կարծէին, որ մէկ–երկու շաբթուան ընթացքին, իրենց 10,000նոց բանակը պիտի կրնայ մաքրել Արարատը, և աշխարհին յայտարարել, որ «աւազակները» ճնշուած են: Բայց դէպքերն այլ ընթացք ստացան:*

---

## 2· ԿՌԻՒՆԵՐԸ

*Մայիսի վերջերը և յունիսի առաջին շաբթուն տեղի ունեցած փոքր ընդհարումներէն յետոյ, թրքական բանակը յարձակողականով մը կը գրաւէր Օրկովը, Իգդիրի և Բայազիտի զօրքերու հաղորդակցութիւնը ապահովելով: Յունիս 9–ին, թրքական 10,000նոց բանակը, 6 սաւառնակներու օժանդակութեամբ, կը ձեռնարկէ ընդհ· յարձակողականի և կը բարձրանայ Արարատի հիւսիսային փէշերը ու կը գրաւէ Գարաքթէփէն, ուրտեղէն կը սկսի լարուած կռիւը: Այս կռիւները կը շարունակուին մինչև յունիս 19–ը և կը վերջանան թրքական պարտութեամբ: Երեք սաւառնակները վար կիյնան քրտական հարուածներէն: Թիւրքերը ժայռոտ ամրութիւններէն անդին չեն կարող անցնիլ և կուտան բազմաթիւ սպանուածներ և գերիներ:*

*Արարատի ղեկավարները տեսնելով, որ թրքական բանակը վճռական գործողութեան մը ձեռնարկած է, և նկատի ունենալով, որ Արարատի ռազմամթերքը պէտք է խնայողութեամբ գործածուի, աւելի վճռական յարձակումներու համար, անմիջապէս յարաբերութեան կը մտնեն Եքմալի, Ալատաղի և Կողբի ուժերուն հետ, որոնք կարծես ազդանշանի մը կը սպասէին կուի ձեռնարկելու համար:*

*«Իբրահիմը» յունիս 19–ին կանցնի Ալատաղ և ոտքի կը հանէ այդ շրջանը, սպառնալով Դիատինին: «Վէլին» խումբ մը ձիաւորներով կը շարժի Իգդիրի ուղղութեամբ և կը հալածէ թիւրք ձիաւորները մինչև Իգդիրի սահմանները: Քէօռ Հիւսէյին փաշայի տղան, որ կրցած էր կազմակերպել Զիլանի, Արճէշի և Բաթնոսի ուժերը, և իրեն կեդրոն ընտրած էր Եքմալ գիւղը, թիւրք–պարսկական սահմանին վրա, անմիջապէս ձիաւոր զօրամասով մը կարշաւէ դէպի Աբաղայ–Արճէշ: Թիկունքային այս ապստամբութիւնը Արարատի օգնութեան համար էր: Ու պէտք է ըսել, որ կայծակի արագութեամբ շարժումը տարածուեցաւ Ալատաղի և Հայտարանցի աշիրէթներուն մէջ:*

*Ալատաղի և Հիւսէյին փաշայի տղայի արշաւանքը կատարուեցաւ շատ արագ և չմեցնող եղանակով մը: Անոնք մինչև յունիս 26–ը կրցան գրաւել Զիլանը, ուր սպանեցին 180 թիւրք զինուորներ, գերի վերցուցին 250 հոգի, գրաւեցին 2 ծանր և 8 օթօմաթիք գնդացիրներ և մեծ քանակութեամբ ռազմամթերք: Սպանուած են Թահիր և Քեամիլ հրամանատարները և մէկ քանի յիսնապետներ: Մահմուտ բէգը (Հիւսէյին փաշայի տղան) Զիլանը գրաւելէն յետոյ, առաջացած է Արճէշի վրա: Թրքական զօրքերը յանկարծակիի գալով՝ տուած են 400 սպանուած և 300 գերի: Քիւրտերը գրաւած են 8 գնդացիր, 1 թնդանօթ, ձիեր և ամբողջ ռազմամթերքը: Սպանուած են հրամանատարը և Արճէշի գայմագամը: Քրտական ուժերը Սիփանէն վար իջնելով գրա–*

digitised by A.R.A.R.@

ւած են Բաթնոսը: Թրքական սաւառնակները, որ կը մասնակցէին կռւին՝ 4 հատը փչացան և այրւեցան. սպանւած են 6 սաւառնորդներ:

Արաղայի շրջանի 60 քրտական գիւղերը նախօրօք թրքական ուժերու կողմէ զինաթափւած էին. այդ պատճառով անոնք չկրցան դիմադրել: Արաղայի և Բերկրիի ժողովուրդի մէկ մասը թողեց և անցաւ Պարսկաստան: Անշուշտ, այդտեղ կեդրոնացած քիւրտերը իրենց ընտանիքը թողնելով հոն, շատերը վերադարձած են իրենց աշիրէթին մէջ, միանալով կռւողներուն: Երևի այսպիսի երևոյթները պատրւակ բռնելով էր, որ թիւրքերը կը պնդին թէ պարսկական զինւած քիւրտեր անցած են Զիլան:

Այսպիսով, ինչպէս կը կտրւէր Բայազիտի և Վանի յարաբերութիւնները: Ու եթէ նկատի ունենանք, որ Կողբի կողմէ ալ միևնոյն ժամանակ քիւրտերը շարժւած էին, Բայազիտի և Իգդիրի զօրքերը, որ Արարատը շրջապատած էին՝ կը շրջապատւէին, երկրի ներսերը բռնկած ապստամբութիւններու շնորհիւ: Թրքական բանակին առջև բաց կը մնար միայն մէկ գլխաւոր ճանապարհ՝ Ալաշկերտի դաշտի ճանապարհը:

Արաղայի և Բերկրիի շրջանի թրքական զօրքերու մէկ մասը ստիպւած էր քաշւիլ դէպի Վան: Քիւրտերը ուզեցին կտրել անոնց ճանապարհը և Սարայի կողմ ղրկեցին Օսման բէգը 120 ձիաւորներով: Մէկ-երկու օր յետոյ կռիւները սկսան Կոթուրի շրջանի մէջ. ինչ որ կը կարծւի թէ Օսման բէգին միացած են այդ շրջանի ուժերն ալ:

Արճէշի և Մալազկերտի գործողութիւններու զարգացման համար՝ քիւրտերը ուզեցին ամրացնել Բերկրին, բայց Բայազիտէն արդէն հասած էին նոր թրքական ուժեր, որոնք տէր դարձան Վան տանող ճանապարհին:

Այս շշմեցնող գործողութիւնները ապշութեան մատնեցին թրքական բանակը, ու էնկիւրի յուզւեցաւ: Ատկէ յետոյ հեռագրական գործակալութիւնը սկսաւ գործել և արտասահմանը նոր տեղեկացաւ շարժման լայն բնոյթին: «Աւազակներու» պատժելու գործը ընդարձակւեցաւ, ու թիւրք կառավարութիւնը խոստավանեցաւ, որ նոր ուժեր ղրկւած են ապստամբները պատժելու համար: Այդ նոր ուժերու թիւը կը հասնէր 12,000-ի, որոնք կը հասնէին Մուշի և Էրզրումի շրջաններէն:

Արարատը շրջապատող զօրքերը երկու կրակի մէջ գտնւելով, յունիս 22-էն սկսած միայն ցուցական կռիւներու տեղի տւին և ծածկեցին իրենց նահանջը, ու քանի մը հազար զօրքեր ուղղեցին դէպի Բէրկրի և Ալատաղ: Հարաւէն և արևմուտքէն կը հասնէր Իհսան փաշայի բանակը: Այսպիսով, կռւի ծանրութեան կեդրոնը կը փոխադրւէր Վանի լճի եզերքներուն վրա և Սիփանի ու Ալատաղի ստորոտները: Արարատը ազատւած էր սեղմող օղակներէն, ու առանց իր գլխաւոր ուժերը սպառելու, ձեռնարկած էր փոքրիկ հակայարձակումներու, սպառնալով Բայազիտին: Որով, թրքական ուժերու մեծ մասը ստիպւած էր գլխաւոր դիրքերը պահպանել, ու սպասել Իհսան փաշայի գործողութիւններու ելքին:

Յունիս 26-էն մինչև յուլիս 13-ը, ճակատագրական կռիւներ տեղի ունեցան Արճէշի և Զիլանի շրջաններու մէջ: Քիւրտերը այդ երկու շաբաթւայ անընդհատ ճակատամարտներու ընթացքին ցուցահանեցին իրենց ամբողջ կորովը և կռւեցան «մահ կամ ազատութիւն» նշանաբանին տակ: Կիները կը կռւէին իրենց ամուսիններու կողքին, զէն ի ձեռին: Թրքական բանակը, շատ մեծ կորուստներով՝ հազիւ կրցաւ վերագրաւել Բաթնոսը, Արճէշը և Զիլանի Զորի վարի մասը: Այդ ահռելի կռիւներու մանրամասնութիւնները կը պակսին: Թիւրքերը գրեցին, որ քիւրտերու զոհերը կը հասնին 3000-ի և թէ մնացածները փախած են լեռնային մասերը, որոնք պիտի հետապնդւին: Կասկածէ դուրս է, որ թրքական բանակի կորուստները քրտական կորուստներէն շատ աւելի են: Այդ բոլորի հաշւեկշիռը վերջը միայն կարելի պիտի ըլլայ ստուգել: Բայց նկատի ունենալով, որ թիւրք կառավարութիւնը ստիպւած էր, երրորդ անգամ ըլլալով, նոր օգնական ուժեր հասցնել կռւի վայրը, ներելի է ենթադրել, որ թրքական բանակը շատ նօսրացած էր, պատերազմը շարունակելու համար:

Թիւրք կառավարութիւնը յուլիս 13-ին հաղորդեց աշխարհին թէ ապստամբութիւնը խեղդւած է, կռւողները փչացած են և փախստականները կը հետապնդւին, որոնցմէ ո՛չ մէկը չպիտի ազատւի: Բայց հազիւ շաբաթ մը անցած, նոր հաղորդագրութիւններն եկան ցոյց տալու, որ Արևելեան Նահանգները մտահոգիչ վիճակ մը կը ներկայացնէին. Մուստաֆա Քեմալը հև ի հև լուրերու կը սպասէ. նոր զօրաբանակներ հոն կը կեդրոնանան: Այդ առթիւ էր, որ եւրոպական մամուլը ապստամբական կռիւներուն պատերազմ անունը ստիպւեցաւ տալ:

* * *

Արճէշի կռիւներուն զուգահեռ, Արարատի կռիւները շարունակւեցան: Յուլիսի առաջին շաբթուն, թրքական բանակը թարմ ուժեր ստանալով ձեռնարկեց յարձակողականի, հանդիպելով Արարատցիներու հակայարձակողականին, որ նպատակ ունէր գրաւել Բայազիտը և յառաջանալ դէպի Ալաշկերտ՝ օգնելու Արճէշի ճակատամարտին: Թիւրքերը ետ մղւեցան: Արարատի ուժերը յուլիս 5-ին գրաւեցին Բուռնէշաշը, գերի վերցուցին ամբողջ վաշտ մը, գրաւեցին 1 թնդանօթ, 7 վրան, մէկ ծանր և 3 թեթև գնդացիրներ, ձիեր և ռազմամթերք: Միւս թևը, որ կառաջանար Բուռնէշագի վրա, չկրցաւ այդ դիրքը գրաւել, որով Բայազիտը չինկաւ: Քիւրտերը գերի բռնած թիւրք զինւորները լծեցին գրաւած թնդանօթին և քաշել տւին դէպի Արարատի բարձրերը:

Իսկ յուլիս 13-էն յետոյ, թրքական գլխաւոր ուժերը կեդրոնացան Արարատի դէմ: Օրերու խնդիր կը նկատւէր Արարատի ընկճումը և այդ անձնավստահութիւնն ունէր նաև թրքական կառավարութիւնը: Իրականին մէջ, ապստամբութիւնը խեղդւած չէր, այլ մէկ շրջանը միայն, հերոսական կռիւներէն յետոյ՝ տեղի տւած էր: Թրքական բանակը նորէն կը ձեռնարկէր այն գլխաւոր գործին, որու համար մայիսի վերջերը ճամբայ ելած էր դէպի Արարատ: Այսպիսով իսկական և վճռական կռիւը կը սկսէր յուլիս 13-էն յետոյ:

digitised by A.R.A.R.@

Թրքական հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէր այդ օրերուն, որ Արարատը չորս կողմէ պաշարուած է, և քիւրտերը քաշուած են ձիւնապատ բարձունքները, և շուտով պիտի բնաջնջուին: Սակայն, անգլիական և ամերիկեան կարևոր թերթերու թղթակիցները հաղորդեցին այդ կռիւներու մասին հետևեալ կարճ հաղորդագրութիւնը.— «Թրքական բանակը հանդիպեցաւ քրտական ուժերու կատաղի դիմադրութեան, որոնք լաւ զինուած են և պաշտպանուած լեռնային անխորտակելի ամրութիւններով»:

Ուրեմն, յուլիս 15–էն սկսեալ մինչև յուլիս 25–ը Արարատի բարձունքներու վրա տեղի ունեցած են կատաղի կռիւներ, և քիւրտերը կրցած են դիմադրել և պահել իրենց ամրութիւնները: Թրքական գործակալութիւնը լռած է, նոր յաղթանակներ չկան, հրապարակը աղմկելու համար: Կայ միայն մէկ հաղորդագրութիւն, որ ինքնին պարտութեան ապացոյց մըն է: Ըստ այդ հաղորդագրութեան՝ Թրքական բանակը վըճռած է աւելի սեղմել պաշարման օղակը և սպասել մինչև սեպտեմբերը, երբ ձիւնը կրնայ ստիպել քիւրտերը վար իջնել բարձունքներէն և իյնալ Թրքական օղակին մէջ: Այս արդէն կը նշանակէ, որ Թրքական բանակի յարձակողականը երկրորդ անգամ (աւելի վճռական անշուշտ) ձախողած է և Թիւրքերը ստիպուած են ոչ միայն նկատի առնել Արարատի անընկճելի ուժը, այլ նաև միջոցներ ձեռք առնել միւս շրջաններու դէմ, որոնք զէն ի ձեռին կը սպառնան ամբողջ Արևելեան Նահանգներուն:

Թիւրքերն իրենց այս ձախողութեան առթիւ լուռ են: Կուրի վայրէն տակաւին մանրամասնութիւններ չեն հասած, որպէսզի կարելի ըլլայ հասկնալ տեղի ունեցած դէպքերու արժէքը և Թրքական բանակի սպառողական դիրքի բուն պատճառները: Ցամենայն դէպս, հերոսական մեծ դրուագներու պատմութիւն մը մեզի պիտի բերեն Արճէշի և Արարատի ճակատամարտները, որոնք տեղի ունեցան յուլիս ամսուան ընթացքին:

---

### 3. ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՆՃԻՌՆԵՐ

Քրտական ապստամբութեան ծաւալման հէնց առաջին օրերէն, Թիւրքիա պատասխանատու նկատեց Պարսկաստանը, յայտարարելով, որ պարսկական Քիւրտիստանէն զինուած քիւրտեր անցած են Թիւրքիա և հրահրած են քրտական շարժումը, և թէ հալածուած քիւրտերը կապաստանին պարսկական հողը, ուր կը գտնեն լաւ ընդունելութիւն: Հետզհետէ երկու երկիրներու յարաբերութիւնները լարուեցան: Թրքական մամուլը շատ խիստ արտայայտուեցաւ պարսկական կառավարութեան հանդէպ, և Թարգմանը հանդիսանալով կառավարական շրջաններու մէջ տիրող կարծիքին, յայտնեց թէ՝ եթէ պարսիկները չեն կարող սահմանը պաշտպանել և իրենց հպատակ ցեղերը զսպել, Թըրքական բանակը իրաւունք պիտի ունենայ մտնել պարսկական հողը և հոն հետապնդէ թշնամիները:

Թրքական և պարսկական կառավարութիւններու միջև փոխանակուեցան ծանուցագրեր, որոնց հիման վրա Թիւրքիա կը պահանջէր, որ Պարսկաստանը գործակցէ Թիւրքիոյ, քրտական ապստամբութիւնները ճընշելու համար: Թիւրքիոյ այս քաղաքականութիւնը քաջալերուած էր բոլշևիկեան Ռուսաստանէն, որ զանազան հաշիւներ ունէր կարգադրելու Պարսկաստանի հետ: Ռուս–անգլիական մրցակցութիւնը իր գլուխը կը ցուցադրէր: Պարսկաստանը հակուած էր ազատուելու ռուսական ազդեցութենէն: Ու ահա, քրտական շարժումը առիթ մը կը դառնար, որ խորհրդային իշխանութիւնը օգտուէր Թիւրք–պարսկական տարաձայնութիւններէն, ոյժ տալով Թրքական տեսակէտին: Այս մրցակցութեան պայքարը, մինչև հիմա կը շարունակուի, բայց Պարսկաստանը մինչև հիմա կը պնդէ իր չէզոքութեան վրա, կը փաստէ, որ Պարսկաստանի հպատակ քրտերն անմասն են տեղի ունեցած շարժումներէն, և թէ իրեն կը մնայ խորհուրդ տալ քիւրտերուն, որ հանդարտ մնան: Թիւրքերը գոհ չեն Պարսկաստանի այս ընթացքէն և միշտ կը պնդեն համագործակցութեան տեսակէտին վրա:

Թրքական և ռուսական շրջանակները կը կասկածին, որ անգլիացիները ետևը կայնած են այս շարժման և իբր թէ գնդապետ Լորէնսը կը գործէ ի հաշիւ քիւրտերուն: Մեր ստացած ստոյգ տեղեկութիւնները ցոյց կուտան, որ մինչև այժմ անգլիացիները ոչ մէկ կապ ունին Արարատի և շրջաններու մէջ բռնկած ապստամբութեան հետ: Դեռ չէ ստուգուած նաև այն պարագան թէ՝ Շէյխ Սայիտի բռնուած տղայի, Սալահէտինի և քրտական շարժման միջև որևէ կապ կա՞յ: Այնպէս որ անգլիական մատի առասպելը Թրքական և բոլշևիկեան գիւտ մըն է: Այս գծով է, որ կընթանան Հայաստանի մեր ողորմելի բոլշևիկներն ալ: Քրտական ազգային ազատագրութեան արիւնալի կռիւները տեղի կունենան իրենց քթին տակ. թնդանօթներու ձայնը կը լսուի մինչև Երևան: Սակայն, անոնք քանի մը խղճուկ լուրեր տպեցին՝ Բերլինի և Մոսկուայի աղբիւրներէն առնելով, ու աւելցուցին թութակօրէն. թէ «Այս անգամն ալ անգլիական իմպերիալիստները պիտի պարտուին»: Ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Լաւ են ըմբռնած քըրտական շարժումը և ազգերու ազատագրութիւնը, շնորհիւ ռուսական բոլշևիզմի, և բացառապէս անոր շահերուն համար...

Անգլիացիները պասիւ են, և մինչև հիմա իրենց ազդեցութիւնը ցոյց չտուին: Անգլիական թերթերը խորհուրդ տուին Թիւրքիոյ և Պարսկաստանին խաղաղ մնալ և չխախտել իրենց բարեկամական յարաբերութիւնները, ու չծածկեցին իրենց կասկածը, թէ նման խռովութենէ մը օգտուողը պիտի ըլլայ Խորհրդային Միութիւնը: Այնպէս որ դիւանագիտական բեմին վրա կը մնան Ռուսաստանը, Պարսկաստանը և Թիւրքիա: Էնկիւրիէն հեռագիր մը կը հաղորդէր, որ Ռուսաստանի, Պարսկաստանի և Թիւրքիոյ (Թեհրանի նոր դեսպանը) դեսպանները Պոլսոյ մէջ իրարու պիտի հանդիպին՝ խորհրդակցելու քրտական ապստամբութեան մասին: Նոյն այդ օրերուն (յուլիս 25) Մ. Քեմալ Եալովայի մէջ, ճաշկերոյթի մը ընթացքին, ուր ներկայ էր Թիւրքիոյ Թեհրանի նոր դեսպանը, ճառ մը խօսելով կըսէր՝ թէ Թիւրքիոյ պետական մարդիկ կը բաղձան

digitised by A.R.A.R.@

տեսնել Պարսկաստանը ուժեղ և կազմակերպուած պետութիւն մը, և թէ ինքը մեծ հաւատ ունի Ռիզա Շահին վրայ: Մ. Քեմալ կը թելադրէր, որ նոր դեսպանը Թեհրանի մէջ ցրուէ այն վատ տպաւորութիւնները, որ պարսիկները կրած էին Թիւրք մամուլի յարձակումներէն: Այս բարեկամական ջերմ խօսքերէն քանի մը օր յետոյ, Ըսմէթ փաշան պաշտօնական ճառի մը մէջ ուրիշ լեզու գործածեց՝ սպառնալով Պարսկաստանին: Անշուշտ, այս արտայայտութիւնները ներքին դրութեան ծանրութիւնը կը բնորոշեն:

Ըստ երևոյթին, պարսկական կառավարութիւնը հաստատ մնացած է իր տեսակէտներուն վրայ: Որովհետև, «Թայմզ» յուլիս 20-ի հեռագրով մը կը հաղորդէ թէ Թրքական կառավարութիւնը ծանուցագիր մը ղրկեց պարսկական կառավարութեան՝ յայտարարելով, որ Թրքական զօրքերը հարկ եղած պարագային պարսկական սահմանը պիտի անցնին հետապնդելու քիւրտերը, որոնք մինչև հիմա չեն դադրած ասպատակելէ:

---

Դիւանագիտական կնճիռներն այս պատկերը կը ներկայացնեն· ու յայտնի չէ թէ Թիւրք-պարսկական լարուածութիւնը և այս վերջին ծանուցագիրը ինչի պիտի յանգին:

## 4· ՇԱՐԺՄԱՆ ԾԱՒԱԼՈՒՄԸ

Քրտական կռիւները չսահմանափակուեցան Արարատի և Զիլանի շրջաններուն մէջ: Քրտական կարևոր շրջաններ, մասնաւորապէս հիւսիսային նահանգներու մէջ, անտարբեր հանդիսատես չհանդիսացան և արձագանգ տուին ազատագրական շարժման: Բացի պարսկական սահմանի երկայնքը գտնուող քիւրտերէն, զէնքի դիմեցին Կոթուրի, Խնուսի, Վարդոյի, Սասունի, Զուլամէրիկի և Շատախի քիւրտերը: Այս կռիւները, ճիշտ է, տակաւին նեղ սահմաններու մէջ կը մնան, և ընդհանուր ապստամբութեան կերպարանքը չստացան: Բայց այն կապակցութիւնը, որ կար այս կռիւներու և Արարատի դիմադրութեան միջև, ակնյայտնի էր: Թրքական կառավարութիւնը յունիս 20-էն սկսեալ հաստատեց այս պարագան, և ձեռնարկեց աւելի լուրջ զինուորական պատրաստութիւններու:

Թրքական մամուլը իր յոխորտագին յայտարարութեանց հետ,— սպանեցինք, շրջապատեցինք, ջնջեցինք, 200 գիւղեր այրեցինք, ևայլն ալաթիւրքա լուրերէն զատ, ստիպուեցաւ ըսել թէ՝ ներկայ քրտական ապստամբութիւնը շատ աւելի լուրջ բնոյթ ունի քան Շէյխ Սայիտի 1925-ի ապստամբութիւնը: Ասկէ զատ, նոյն Թիւրք մամուլը, հակառակ իր պնդումներուն թէ քրտական շարժումը աւազակային խմբակներու գործն է, որ այդ շարժման դրդիչները օտար պետութիւններն են, որ յետադիմական ձեռնարկ մըն է քեմալական բարենորոգումներու հանդէպ, ստիպուեցաւ խոստովանիլ, թէ եղածը քիւրտ ազգային շարժում մըն էր, որ բռնկած էր «շնորհիւ Սուրիայէն, Իրաքէն և արտասահմանէն ներս խուժած քրտական ազգայնութեան գաղափարականութեան»:

Թիւրքիա, այս պայմաններուն մէջ, Արևելեան նահանգները պատերազմական բեմ դարձուց և հոն կեդրոնացուց մօտ 60,000 զինուոր: Գոնէ ամերիկեան և անգլիական մամուլի իրազեկ թղթակիցներու տուած տեղեկութիւնները խոշոր բանակի մը գոյութիւնը կը հաստատեն: Թիւրքիա, բնական է, անտեղեակ չէ, որ քրտական խոշոր զանգուածները կը բնակին Խարբերդի (Դէրսիմ), Տիգրանակերտի, Սղերդի և Հէքիարիի նահանգներուն մէջ: Այս շրջանները եթէ ապստամբական դրօշը բարձրացնեն, շատ աւելի մեծ դժուարութեան պիտի մատնեն քեմալական վարչութիւնը: Այս վտանգին հսկող բանակ մը յիշեալ վայրերու մէջ կը գտնուի: Բայց Արարատի, Զիլանի և պարսկական սահմաններուն վրայ կռիւը յաջող և ապահով տանելու համար, պէտք էր նախ և առաջ ապահովէր Թրքական բանակի կռնակը, որ մշտապէս հարուածելի կը մնար Խնուսի, Վարդոյի, Կէնճի, Սասունի, Մօտըքանի և Հէքիարիի կողմէ: Միևնոյն ժամանակ պայթած կռիւները ցոյց տուին, որ վտանգը շատ աւելի լուրջ էր, քան Թիւրքերը կրցած էին հաշուել: Այդ է պատճառը, որ մենք այսօր, 60,000նոց բանակի մը կեդրոնացումը կը տեսնենք Վանի, Բայազիտի և Մուշի շրջաններուն մէջ:

Երկու ամսուան կռիւներէն յետոյ, Թրքական բանակի այս կեդրոնացումը անվիճելի փաստ մըն է, որ քրտական շարժումը չէ խեղդուած և թէ ամբողջովին խեղդելու համար Թիւրքիա ստիպուած է ծանր պատերազմական գործողութիւն մը վարել խնդրոյ առարկայ շրջաններուն մէջ: Եւ դեռ հարցական է, թէ իր նպատակին պիտի հասնի՞: Եթէ Թրքական բանակներն իրենց գործը կիսատ թողուն և բաւականան անուանական խաղաղութեամբ մը, ըմբոստ շրջանները պիտի գտնեն իրենց անձնավստահութիւնը և աւելի կազմակերպուած կուրծք պիտի տան Թրքական ոտնձգութիւններուն: Իսկ եթէ Թրքական բանակը ուզէ արմատապէս լուծել հիւսիսային քիւրտերու հարցը, ստիպուած պիտի ըլլայ յիշեալ բոլոր շրջաններու դէմ վճռական գործողութիւններու ձեռնարկել, և ստիպել այդ վայրերու մէջ բնակուած քիւրտերը ճակատագրական կռուի բռնել Թիւրք զօրքերուն հետ, որով ապստամբական շարժումը ընդհանուր բնոյթ պիտի ստանայ և վարակէ նաև Հարաւային Քիւրտիստանը:

Վերջին հաղորդագրութիւններէն արդէն կերևի, հարաւային քիւրտերն ալ շարժման ձեռնարկած են: Գարզանի Շէյխի 500 ձիաւորները, որ անցած էին Հէքիարիի շրջանը և կռուի բռնուած Թրքական ուժերուն հետ, լուրջ քայլ մըն է, որ կարող է ոտքի հանել Բոհտանի և Հէքիարիի խոշոր աշիրէթները: Թրքական գործակալութեան առաջին հաղորդագրութեան համաձայն, այդ 500 հոգին ետ մղուած են, մինչդեռ յուլիս 30-ի և 31-ի հաղորդագրութիւններէն կերևի, որ Թրքական նոր ուժեր ղրկուած են Հէքիարի՝ ապստամբները շրջապատելու: Մխիթարանքի համար Թրքական գործակալութիւնը կը յայտնէ, թէ հարաւի այդ շարժումը չպիտի ազդէ Արարատի դէմ ծրագրուած պատերազմական գործողութիւններուն վրայ:

Այս սպառնալից դիրքը, ցոյց կուտայ, որ քրտական շարժումը մէկ օրէն միւսը կարող է ընդհանուր ապստամբութեան վերածուիլ: Այդ խոշոր վտանգն է գլխաւոր պատճառը Թրքական մեծ բանակի մը կեդրո-

digitised by A.R.A.R.@

նացման: Բայց կան չարք մը այլ բարդութիւններ ալ, որոնք միջազգային գաղտնի ծալքեր ունին, ու մենք աչք չենք կարող գոցել այդ ծանրակշիռ երեւոյթներուն վրայ: Թրքական 60,000նոց բանակի ներկայութիւնը որոշ չափով կապուած է Պարսկաստանի և Ռուսաստանի փոխյարաբերութիւններուն, ինչպէս նաև Կովկասի խլրտումներուն հետ:

Ռուս-պարսկական և ռուս-թրքական յարաբերութիւնները զասաւորուեցան յօգուտ Թիւրքիոյ այնպիսի առեն մը, երբ Թիւրքիոյ ներքին (քրտական վտանգը) և արտաքին (պարսկական սահմաններէն հողեր կցելու և կովկասեան թուրքերու մէջ Թիւրքիոյ ազդեցութիւնը բարձրացնելու) խնդիրները ձեռնտու գտին մեծ զօրաբանակի մը կեդրոնացման՝ Ռուսաստանի հաւանութեամբ:

Ռուսաստանի թելադրանքը բացայայտ է: Ռուսաստանը այդ քայլով երկու նպատակ կհետապնդէ: Նախ, թրքական բանակի ներկայութիւնը, որպէս սպառնալիք մը կը գործածէ Կովկասի ժողովուրդները (մանաւանդ հայերը) վախցնելու, և ով գիտէ, կովկասեան ընդհանուր ապստամբութեան մը պարագային, օգտուելու թրքական ուժերու ներկայութենէն:

Երկրորդ, թրքական սպառնալիքը ցցել Պարսկաստանի դէմ, և ստիպել այս վերջինը ընդառաջ երթալու Խորհրդային Ռուսաստանի պահանջներուն:

Թիւրքիոյ համար, այսպիսի արտօնեալ վիճակ մը, կրկնակի ձեռնտու նշանակութիւն ունէր: Նախ, այդ ուժերն անհրաժեշտութեան թելադրանքով պիտի կեդրոնացնէր Արեւելեան Նահանգները՝ քրտական վտանգէն ազատելու համար: Ու ռուսական շահերու զուգադիպութեամբ, Թիւրքիա բաց ճամբայ կը տեսնէր իր առջև Պարսկական Ատրպատականէն մաս մը գրաւելու, ու Արաքսի ափերու երկայնքով՝ տիրապետող դիրք մը հանդիսանալու՝ համաթրքական ծրագիրը աստիճանաբար առաջ տանելու համար:

Թրքական բանակի ներկայութիւնը այս ծանր խնդիրները հրահրելու կոչուած ոյժ մըն է: Ու որքան դիմանան քիւրտերը, այնքան պիտի բարդանան խնդիրները: Պարսկաստանը կաշկանդի չեզոք մնալ: Բայց Թիւրքիա կը գիտակցի թէ՝ Փէհլէվի Շահի Պարսկաստանը երէկուան թոյլ երկիրը չէ, և եթէ անոր ազգային արժանապատուութիւնը վիրաւորուի, կարող է դիմել զէնքի: Այդ պարագային, քրտական ապստամբութեան կարող են միանալ Պարսկաստանի բոլոր քիւրտերը: Եթէ պատերազմ մը ծագի պարսիկներուն և թիւրքերուն միջև, թիւրքերը շատ ազատ վազքով մը չէ, որ պիտի կրնան ներս խուժել Պարսկաստան: Պարսկաստանի այս վերապահ դիրքը մղած է Թիւրքիան, նկատի առնել պատերազմի մը հաւանականութիւնը:

Այս կրկնակ պատճառներով, գալիք ամիսներուն անակնկալներ վերապահուած են, որոնց մասին հիմակուընէ գուշակութիւններ կարելի չէ ընել: Միայն այսքանը կարելի է ըսել, որ օգոստոս ամիսը, երկու կողմերուն համար ալ, պիտի ըլլայ ճակատագրական ամիս մը: Եւ թէ քիւրտերը կրնան դիմանալ մինչև սեպտեմբեր, վստահօրէն կարելի է ըսել, որ այլևս այս տարի անընկճելի պիտի մնան:

## Ե. ԿՈՏՈՐԱԾՆԵՐ ՈՒ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐ

Կռիւներու ընթացքին, երկու կողմերն ալ, դաժան կեցուածք մը ունեցած են և գրեթէ չեն խնայած պատերազմական գերիներուն: Այս կռիւը իրար բնաջնջելու ցեղային կռիւ մըն է՝ պատրաստուած թիւրք ցեղին կողմէ: Տակաւին երկու կողմերու վնասներուն քանակը ճշտուած չէ: Եթէ խօսք չընենք կռիւներու հետևանքով տեղի ունեցած սպանութիւններու մասին, ու միայն աչքի առջև ունենանք զանգուածային կոտորածները, պիտի տեսնենք, որ քրտութիւնը այժմ կապրի ճիշդ այն օրերը, ինչ ապրեցաւ հայ ժողովուրդը 1915-ին Ապրիլեան Եղեռնի օրերուն:

Մինչև հիմա հասած տեղեկութիւնները ցոյց կուտան, որ Արարատի շրջանի ժողովուրդը զինաթափուած է. ժողովուրդի մէկ մասն անցած է Պարսկաստան, միւս մասը ենթակայ է կոտորածի և տեղահանութեան: Աղրակի ամբողջ շրջանը սկսած են տեղահանել և կոտորել, ճիշդ հայերուն պէս: Վանի և շրջակայքը գտնուող քիւրտ բոլոր արուները հաւաքած և Վանի լճի մէջ խեղդած են: Զիլանի, Արճէշի և Բաթնոսի շրջաններու ժողովուրդի մնացորդները, որ չեն կարողացած լեռները բարձրանալ, ենթակայ եղած են անխնայ կոտորածի: Թրքական գործակալութիւնը, այդ առթիւ, կը յայտնէր թէ՝ խիստ պատժի ենթարկեցան անոնք, որ ըմբոստներն իրենց մէջ ընդունած էին: Այդ խիստ պատիժը զանգուածային կոտորած ու շրջաններու հրդեհումն էր: Թիւրքերը պարծանքով յայտարարեցին թէ 200 քրտական գիւղեր աւերած և հրդեհած են: Կար նաև ուրիշ զինուորական հաղորդագրութիւն մը, ուր թրքական սպայակոյտը կը յայտնէր թէ՝ մեծ քանակութեամբ պատերազմական աւարներ ձեռք ձգած են, և թէ անհամար մսացու կենդանիներ ունին: Այս խոստովանութիւնը կը նշանակէ, թէ թրքական բանակը կռիւներու և կոտորածներուն հետ մէկտեղ, զբաղուած է նաև թալանով: Երեւի թրքական բանակի ձեռքն ինկած են այդ աւերուած 200 գիւղերու հարիւր հազարաւոր անասունները և անասնապահական ամբողջ պարէնը, որպէս լfեալ գոյf··· այս պատմութիւնն արդէն ամբողջ աշխարհին ծանօթ է: Թրքական 60,000նոց բանակի տասնեակ միլիոններու հասնող ծախքերը սնանկացուցած են թրքական կառավարութեան գանձը, ու հիմա ամբողջ ժողովուրդ մը կողոպտելով կուզեն ապրիլ:

* * *

Որպէս եզրակացութիւն, այս ամփոփ տեղեկութիւններուն, կարող ենք ըսել թէ ներկայ ապստամբութիւնը վճռական նշանակութիւն պիտի ունենայ զօտեմարտող երկու ազգերուն համար, անկախ արտաքին դիւանագիտական բարդութիւններէն:

Խնդիրը հասած է վերջին հանգրուանին. կա՛մ թիւրքերը պիտի քաշուեն Արեւելեան Նահանգներէն կա՛մ քիւրդերը պէտք է ենթարկուին ծանր կորուստներու:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

digitised by A.R.A.R.@

# ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

*Սոյն տարուայ սկզբին, բոլշեւիկների կոլեկտիւացման քաղաքականութիւնը, հասաւ իր վայրագութեան գագաթնակէտին: Հայ գիւղը տնքում էր խորհրդային «քեալալեօզութիւններից»: Այլեւս համբերութեան բաժակը լեցուած էր: Եւ տարիների ընթացքում, ժողովրդի և իշխանութեան միջև տեղի ունեցող քաղաքացիական խուլ պայքարը, իր արտայայտութիւնը գտաւ զինական բախումների մէջ:*

*Նախ քան համատարած կոլեկտիւացման անցնելը, իշխանութիւնը սկսեց զանգուածային ձերբակալութիւններ: Բազմաթիւ անմեղ գիւղացիներ լեցւեցին բանտերն, ու աքսորւեցին Ռուսաստանի խորքերը: Իւրաքանչիւր գիւղից դուրս քշւեցին մի շարք ունեւորներ՝ նախօրօք բռնագրաւելով նրանց ամբողջ ունեցուածքը: Ձնայած ձմրան սաստիկ ցրտերին, արտաքսուածների կին ու երեխաները փողոց էին նետւում՝ արգելելով անգամ իրենց անհրաժեշտ իրերը վերցնել:*

*Նման վայրագութիւններ տեղ էին ունենում համարեա թէ ամէն օր: Գիւղի ունեւոր տարրերը՝ ահաբեկւած ու սարսափած՝ լռութեամբ տանում էին ամէն մի բռնութիւն ու քմահաճոյք: Միայն միջակ խաւերն ու չքաւորներն էին, որ բողոքի ձայն էին բարձրացնում: Այս վերջիններն էլ դէմ էին կոլեկտիւացման, որովհետև դժւար է աշխատաւոր գիւղացու համար զրկւել տարիների ընթացքում իր ճակատի քրտինքով ձեռք բերած տնտեսութիւնից: Գիւղացին արդէն փորձով գիտէր, որ մտնելով կոլխոզի մէջ, ինքը պէտք է քրտնաթոր աշխատի և հազիւ կարողանայ պահպանել ֆիզիքական գոյութիւնը, իսկ իր աշխատանքի արդիւնքն ու բարիքները պէտք է վայելեն պորտաբոյծ կոմունիստներն ու զանազան բախտախնդիրներ:*

*Գիւղատնտեսութեան քայքայման պրոցեսն աւելի ուժեղացաւ, երբ գիւղերը եկան բանւորական բրիգադները: Իշխանութիւնը՝ կոլեկտիւացման քաղաքականութեանը ոյժ տալու նպատակով, և գիւղական աշխատաւորութեան ու քաղաքի բանւորութեան մէջ մերձեցում առաջացնելու համար, քաղաքներում կազմակերպեց բանւորական խմբեր (կոմունիստներից) և ուղարկեց գիւղ՝ ղեկավարելու կոլեկտիւացման աշխատանքները: Այս բանւորները, փոխանակ օգնելու գիւղացուն և բարեկամանալու նրա հետ, սկսեցին իրենց հերթին զանազան կամայականութիւններ անել ու ճնշել գիւղացիութեանը, ճիշտ այնպէս, ինչպէս եղաւ* 1920–21*-ին՝ ռազմական կոմունիզմի շրջանում: Սրանց հակագիւղացիական ընթացքն աւելի գրգռեց ժողովրդին:*

*Գիւղում տիրող նման դրութիւնն էր պատճառը, որ գիւղացիներից շատերը, այլեւս չդիմանալով խորհրդային իշխանութեան գազանաբարոյ վարչաձեւին, զինւելով բարձրացան լեռները: Սկզբում, փախստականները՝ նորանոր բարդութիւններ չառաջացնելու համար, խոյս էին տալիս ընդհարումներից: Դեռ եւս յոյս ունէին, թէ կառավարութիւնը կը զգաստանայ ու կը փոխի իր կործանարար քաղաքականութիւնը: Միւս կողմից էլ, գիւղացիութեան զայրոյթն օրէցօր մեծանում էր ու փրկութեան որևէ ելք փնտռում:*

*Ի՞նչ անել:*

*Այս հարցի պատասխանը տրւեց ըմբոստ լեռնականների կողմից, որոնք՝ միանալով փախստականների հետ, պարզեցին ապստամբութեան դրօշ: Մարտ* 15*-ի գիշերը, ապստամբները, կտրելով հեռագրաթելերը, զինաթափ արին տեղական խորհուրդներն ու կոմունիստներին, և իշխանութիւնն իրենց ձեռքն առան:*

*Կարճ ժամանակամիջոցում, խորհրդային լծից ազատագրւեցին, Դարալաղեազի լեռնային գօտում ընկած հետեւեալ գիւղերը՝* Սուլթանբէկ, Սիս, Ալմալու, Օղբին, Գորադիզ, Մարտիրոս, Գնդևազ, Ղուշչի, Իթղուան և Ազատակ: *Ապստամբ հայ գիւղերին միացան նաև Նախկրայի հետեւեալ թրքական գիւղերը՝* Ջախակը, Բուզգով, Գերմաչաթուխ, Թրխիշ, Փաիզ *և ուրիշներ:*

*Հայ և թուրք ապստամբները միանալով՝ կենտրոնացան Ալմալու գիւղում: Այստեղից շարժւում են Աղ Թաշի վրա, ուր համախմբւել էին շրջանի կառավարական ուժերն ու կոմունիստները: Առաւօտեան լուսաբացին սկսւում է կռիւը, որ տեւում է չորս ժամ: Կոմունիստները՝ տալով երկու սպանւած, թողնում են գիւղը ու նահանջելով՝ ամրանում են Փաշալու գիւղում, որը Դարալագեազի գաւառի երկրորդ շրջանի վարչական կենտրոնն է:*

*Աղ Թաշը գրաւելուց յետոյ, ապստամբները շարժւեցին Փաշալուի վրա: Ձնայած կարմիրները ստացել էին նոր ուժեր և գնդացիրներ, բայց և այնպէս կարողացան դիմադրել միայն կէս օր: Չկարողանալով դիմանալ ապստամբների կատաղի գրոհին, կառավարական ուժերն այստեղից էլ նահանջեցին:*

*Ապստամբները քայլ առ քայլ հետապնդում են խուճապի մատնւած կարմիրներին: Վերջիններս ամրանում են Արփաչայ գետի ափի բարձունքների վրա: Կռիւը տեւում է մինչև ուշ գիշեր: Այդ ժամանակ ապստամբների ձախ թեւը գրաւելով Ազատակ և Փոռ գիւղերը, վերցնում է «Դաշ Ալթի» կամուրջն ու կտրում խճուղին: Շրջապատւելու վտանգից ազատւելու համար, թշնամին նահանջում է դէպի հիւսիս՝ Նավլար գիւղի ուղղութեամբ ու կենտրոնանում Մալիշկայում:*

*Կառավարութիւնը Մալիշկայում բաւական ուժեր է կենտրոնացնում: Զօրակոչում է շրջանի բոլոր կուսակցականներին, ուղարկում է վեց գնդացիր և մէկ զրահապատ օթօմոբիլ: Միւս կողմից էլ, իրենց հերթին, ուժեղանում են ապստամբները, որոնց միանում են նորանոր ապստամբ գիւղերի կռւող ուժերը: Տեղի է ունենում ահեղ ճակատամարտ: Գնդացիրների ու զրահապատի կրակի տակ կարմիրները մի քանի անգամ հակայարձակման են դիմում՝ փորձելով պատռել ապստամբների շղթան: Սակայն, ապստամբներն աւելի կուռ են օղակում թշնամուն և միահամուռ գրոհով յաջողում են դուրս վանել կարմիրներին ու գրաւել Մալիշկան:*

digitised by A.R.A.R.@

*Փախուստի մատնած կառավարական ուժերը կենտրոնանում են Քեշիշքենդում: Ապստամբներն էլ համախմբելով իրենց ուժերը, պատրաստւում են յարձակւել Քեշիշքենդի վրա, ուր գտնւում են ռազմամթերքի պահեստներ:*

*Իրենց ուժերի մէկ մասը թողնելով Մալիշկայում, ապստամբներն անցնում են Այեար գիւղի լեռները՝ յարձակւելու Քեշիշքենդի վրա: Այդ միջոցով նրանց համար աւելի յարմար էր կապ պահպանել Տանձիկի ապստամբների հետ և արգելել թշնամուն անցնել իրենց թիկունքը: Ապստամբների աջ թեւը՝ Մուշեղ Զաքարեանի, Պարոյրի և Ֆաթուլայի ղեկավարութեամբ, արդէն գրաւած է լինում Դարալագեազի արեւմտեան մասի մի շարք հայկական ու թրքական գիւղեր և առաջանում է դէպի Այնազուր:*

*Ճիշտ այն ժամանակ, երբ ապստամբները գրաւած են լինում Դարալագեազի խոշորագոյն մասը, կառավարութիւնն ապստամբների դէմ է շարժում հայկական երկրորդ հրացանաձիգ գունդը՝ երկու մարտկոցներով (12 թնդանօթ): Շարուրից անցնելով թիկունք՝ կառավարական զօրքերը սկսում են ռմբակոծել ապստամբների դիրքերն ու ըմբոստացած գիւղերը: Ռումբերը առանձնապէս աւերներ են գործում Խաչիկ, Տանձիկ և Ռինդ գիւղերում: Հետաքրքրականն այն է, որ զօրքերին խաբում են՝ յայտարարելով, թէ՝* իբր լեռներում կռւողները ոչ թէ հայ ապստամբներ են, այլ քիւրդ հրոսակախմբեր, որոնք յարձակւել են հայ գիւղերի վրա:

*Ապստամբների համար ստեղծւում է ծանր կացութիւն: Ի հարկէ, նրանց մտահոգողը ոչ թէ թնդանօթներն էին, այլ ռազմամթերքի պակասը: Ունեցած փամփուշտներն համարեա թէ սպառման վրայ էին. եղածների էլ մեծ մասը նպատակին չի ծառայում, որովհետև երկար ժամանակ գետնի տակ պահւած լինելուց խոնաւացել էին և չէին պայթում: Քեշիշքենդի պահեստներն էլ գրաւել չի լինում, որովհետև նոր եկած զօրքերը ուժեղացնում են Քեշիշքենդի դիմադրութիւնը:*

*Նոր եկած գնդի երկու վաշտերն շարժւում են Խաչիկ գիւղի վրայով դէպի Գորադիզ, նպատակ ունենալով կտրել ապստամբների թիկունքը:*

*Կառավարութիւնը թռուցիկներ է տարածում, որ եթէ ապստամբները իջնեն լեռներից ու յանձնւեն, ընդհանուր ներում կը ստանան: Առանց ռազմամթերքի մնացած ապստամբների աջ թեւի մէ կմասը յանձնւում է: Մնացած մասը քաշւում է լեռները:*

*Ապստամբների ձախ թեւը, Քեշիշքեանդի վրա մէկ ամբողջ օր կատաղի կռիւ մղելուց յետոյ, նահանջում է դէպի Ազատակ գիւղի լեռները: Այստեղ տեղի են ունենում սոսկալի կռիւներ: Ապստամբների վերջին փամփուշտը սպառւում է: Այլևս դիմադրելու հնարաւորութիւն չի լինում: Կառավարական զօրքերը յարձակւում են երկու ուղղութեամբ՝ Խաչիկի և Զապա-Չէյվայի խճուղիի վրայով: Ապստամբները կռւում են մինչև գիշեր և ապա նահանջում Նախիջևանի շրջանի Բուզգով և Գերմաչաթուխ գիւղերը:*

*Այստեղ էլ ապստամբ գիւղացիութեան մէկ մասը՝ հաւատալով կառավարութեան խոստումներին, յանձնւում է: Միւսները բարձրանում են լեռները: Անձնատուր եղածներից շատերին բանտարկում և աքսորում են:*

*Երկրորդ գունդը երկար չմնաց Դարալագեազում: Երբ զօրքը համոզւում է, որ նրանք գործ ունեն ոչ թէ քիւրդ «աւազակների», այլ ապստամբ հայ գիւղացիութեան հետ, սկսում է տրտնջալ: Այդ խմորումներից վախենալով, գունդն իսկոյն փոխադրում են Լենինական:*

*Այնուհետև հայ դինւորներին փոխարինում են սահմանապահ ռուս զօրքերը, որոնց միացնում են տեղի հայ և թուրք կոմունիստներին: Սրանք շաբաթը մէկ-երկու անգամ յարձակւում են լեռներում մնացած ապստամբների վրա, սակայն, միշտ էլ պարտութեան մատնւելով, վերադառնում են ձեռնունայն:*

*Արժէ այդ ընդհարումներից մի քանիսի վրա կանգ առնել:*

## ԲԻԼԱՒԻ ԿՌԻՒԸ

*Բիլաւի լեռներում մնացած ապստամբների թիւը տասնևմէկ էր (որոնց մէջ գտնւում էր և տողերիս գրողը):*

*Սահմանապահ ռուս զօրքերից երկու վաշտ, իրենց հետ վերցնելով շրջանի թուրք կոմունիստներին, յարձակւում են այդ փոքրիկ խմբի վրա: Ռուսները և թուրքերը շարժւում էին երկու ուղղութեամբ՝ մէկ վաշտն անցնում է Ագնաբերդի սարերից խմբի թիկունքը, իսկ միւս վաշտը յարձակւում է Ղարաբաղլիարի թուրք գիւղից: Առաւօտ վաղ սկսւում է կատաղի կռիւ, որը տևում է մինչև ուշ գիշեր:*

*Զնայած կարմիրների թիւը քսան անգամ աւելի էր (200), բայց և այնպէս, նրանք չեն կարողանում մօտենալ տղաների դիրքերին: Կռւի ընթացքում, աննման քաջութիւն յայտնաբերելով, սպանւում է Մուշեղ Զաքարեանը (Այնազուրցի): Հերոսաբար զոհւում է նաև թուրք Մահմեդը: Օգտւելով գիշերւայ մթից, խումբն իր հետ առնելով վիրաւոր Կարապետ Ցարութիւնեանին, անյայտանում է:*

*Կարմիրներից վիրաւորւում է հրամանատարը և սպանւում են տասներեք հոգի:*

*Այս կռիւը տեղի ունեցաւ ապրիլ 27-ին:*

## ՋՈՐԻ ԿՌԻՒԸ

*Ջորի ապստամբների (Ղուշչիի և Գնդևազի) վրա յարձակւում են Քեշիշքենդի միլիցիան, գաւառի կոմունիստ-կոմսոմոլներից կազմւած զինական խումբը և յիսուն հոգի ռուս սահմանապահ զինւորներ՝ թւով 250 հոգի:*

*Կռիւը երկար չի տևում: Կարմիրները, կռւի դաշտում թողնելով տասնևհինգ սպանւած ու մէկ վիրաւոր, փախչում են:*

*Այս կռւից յետոյ, Ղուշչի, Գնդևազ և Հէրհէր գիւղերում յայտարարւում է զինւորական դրութիւն: Մահւան սպառնալիքի տակ գիւղացիներին պատւիրում են ապստամբներին հաց և փամփուշտ չմատակարարել: Ապստամբներին օժանդակելու համար Բազարչայում գնդակահարւում են չորս հայեր:*

digitised by A.R.A.R.@

## ՉԷՉՈՒԼՈՒԻ ԿՌԻՒԸ

*Թրքական Չէչուլու գիւղը գտնւում է Նախկրայի հիւսիս-արեւելեան լեռնային մասում՝ Սիսիանի սահմանների մօտ:*

*Դեռ ևս յունուարին, այս գիւղը, դէմ արտայայտուելով կոլեկտիւացման, ըմբոստանում է: Կառավարութիւնը բռնագրաւում է գիւղի ամբողջ անասունները, ու մի քանի ընտանիքներ պատանդ վերցնելով՝ պահում է Նախիջևանի բանտում:*

*Մի քանի ամիսների ընթացքում, ապստամբ գիւղացիները ահաբեկում են տասնեակաւոր խորհրդային պաշտօնեաների ու կուսակցականների և զանազան ընդհարումների ժամանակ սպանում մի քանի հարիւր ռուս զինւորներ:*

*Յունիսի վերջերին, Նախկրայի կառավարութիւնը զօրակոչում է բոլոր կռւող կուսակցականներին, կազմում է պարտիզանական խումբ (վճարովի) և ռուս սահմանապահների հետ ուղարկում է Չէչուլուի վրա: Կառավարական զօրքերը, թւով 600 հոգի, իրենց տրամադրութեան տակ ունենալով թնդանօթներ, գնդացիրներ և* խեղդուցիչ գազեր՝ *շարժւում են ապստամբ գիւղի վրա: Ըստ լուրերի, Զանգեզուրի կողմից էլ ռուս զօրքեր անցել են Չէչուլուի թիկունքը:*

*Ապստամբ թուրքերը, որոնց մէջ կան նաև Սիսիանից փախած հայեր, ամրանալով անառիկ բարձունքներում, կռւում են հերոսաբար:*

*Ապստամբների ղեկավարներն են Կարդաշ-Խանը և հայ Սաշան:*

*ԱՐՍԷՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԵՑԻ*

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

*Խ. Հ. Միութեան զանազան մասերում և մասնաւորապէս Հայաստանում ու Ադրբէջանում բռնկւած հակակոլխոզային գիւղացիական կռիւները — որոնց սարսափը գլխակորոյս պարտութեան մատնեց բոլշեւիկներին «գիւղացիական ճակատի վրա» — տեղիք են տալիս մի քանի խիստ հրահանգիչ եզրակացութիւնների:*

*Առաջին եզրակացութիւնը, որ հին, փորձւած ճշմարտութեան բնոյթ ունի, այն է որ* բոլշևիկները միմիայն բռնի ուժի ճնշման տակ կարող են զիջումի գնալ, *անգամ եթէ այդ զիջումը առողջ բանականութեան պահանջն է հանդիսանում:*

*Այս տեսակէտից, նրանց իշխանութիւնը բացառիկ տեղ է գրաւում բոլոր յեղափոխական և հակայեղափոխական իշխանութիւնների մէջ: Հազւագիւտ չեն դէպքերը, երբ վերջինները, զգալով իրենց տնտեսական, ընկերային կամ քաղաքական առաջադրութիւնների անհամապատասխան լինելը հանրային զարգացման օրէնքներին կամ կեանքի իրական պահանջներին՝ հրաժարւել են նրանից և գործունէութեան նոր ուղիներ ընտրել իրենց համար: Սակայն, բոլշևիկների տասնեակ տարւայ կառավարչութեան մէջ չի կարելի մատնանշել մի հատիկ փոքր ի շատէ լուրջ և ընդհանուր նշանակութիւն ունեցող դէպք, երբ նրանք, արժանի հարկը տալով իրական պայմաններին, կամովին փոխած լինեն իրենց ուղեգիծը:*

*Սրա համար էլ, հետզհետէ նւազում է թիւը այն քաղաքական ուտոպիստների, որոնք բոլշևիզմի խաղաղ բարեշրջման երգերն են երգում: Մինչև իսկ ռուս մենշեւիկները, որոնք հոկտեմբերեան յեղաշրջումից ի վեր ակընդէտ սպասում էին, թէ ահա որտեղ որ է բոլշեւիկները խելքի կը գան և ձեռք կը քաշեն իրենց յիմարութիւններից — մինչև իսկ նրանք հիմա զգալիօրէն փոխել են իրենց տոնը: Եւ Խ. Հ. Միութեան աշխատաւորներին ուղղւած Ա. Ը. Ինտերնասիոնալի կոչը, որ բոլշեւիկների կողմից որակւում է իբրև ապստամբութեան կոչ, գլխաւորապէս ռուս մենշևիկների պահանջով է հրապարակ եկել:*

*Այո՛, բոլշևիզմը բարեշրջւել չի կարող. որովհետև բարեշրջումը անյարիր է նրա էութեանը: Որևէ բռնի ուժի ճնշման տակ նա կարող է խորտակւել, կարող է կարճ կամ երկար ժամանակով, աւել կամ պակաս չափով, նահանջել իր գրաւած դիրքերից. բայց բարեշրջւել — երբե՛ք:*

*Ստալինի և իր ճետերի խուճապահար նահանջը «կոլխոզային դիրքերից» եկաւ նորից մի անգամ շեշտելու այս ճշմարտութիւնը: — Երկրի տնտեսական կեանքը կատարեալ քաօսի էր մատնւել, հողագործական աշխատանքների մասին ոչ ոք չէր մտածում, սովի ուրւականը ցցել էր արդէն իր դաժան գանգը, տարագրւած գիւղացիների լացն ու կականը բռնել էր ամբողջ աշխարհը — և այս ամենը բոլշևիկների հոգը չէր: Բայց հէնց որ անդրկովկասեան լեռների և Ռուսաստանի անտառների մէջ հրացանները որոտացին և «հրոսակների» դէմ ելած Չեկայի ուժերն սկսեցին հալւել՝ բոլշևիկներն իսկոյն «զգացին իրենց սխալը» և մինչև օրս էլ չեն կշտանում ինքնամտրակման հաճոյքից...*

*Երկրորդ եզրակացութիւնը, որ նոյնպէս բաւականաչափ հին ճշմարտութեան հանգամանք ունի, այն է,* որ ոչ մի ոյժ չի կարող այնքան ազդու լինել բոլշևիկների համար, որքան ապստամբող գիւղացիութեան բռունցքը:

*Այս բռունցքի ճնշման տակ էր, որ ժամանակին Լենինը ռազմական կոմունիզմի գաղափարներից թաւալգլոր ընկաւ մինչև «Նէպի» կամ նոր տնտեսական քաղաքականութեան ճահճուտ խրամատները: Նրա հարւածների տակ էր, որ մասնաւորապէս մեզ մօտ, Հայաստանում, բոլշևիկները մի առ ժամանակ վերջ տւին նախափետրւարեան բաշիբոզուկութիւններին ու խելագարութիւններին: Գիւղացիական բռունցքի սարսափից էր, որ բոլշևիկները, երեք տարի առաջ, երեսները դարձրին դէպի գիւղը, այսինքն սկսեցին գիւղացիութիւնը սիրաշահելու քաղաքականութիւն բանեցնել: Նոյն սարսափի ազդեցութեան շնորհիւ էր, որ հացամթերման գործը, որ կազմակերպւած թալանի բնոյթ ստանալով՝ կատաղեցրել էր գիւղացիներին: Վերջապէս այդ նոյն գիւղացիական բռունցքի զօրութեանն ենք պարտական, որ բոլշևիկները այսօր, մեր աչքի առաջ, ատամներ կրճտացնելով, լքում են «կոլխոզային նւաճումները»...*

*Գիւղացիական բռունցքի այս փրկարար ազդեցու-*

digitised by A.R.A.R.@

թիւնը, որ կարելի է աւելի՛ եւ ցայտուն ներկայացնել, եթէ ցանկանանք մտնել խորհրդային իշխանութեան և գիւղացիութեան տասներեք տարուայ փոխյարաբերութեանց մանրամասնութիւնների մէջ՝ պէտք է բերի մ՛ազ այն մտքին — և սա մեր երրորդ եզրակացութիւնն է — որ հակաբոլշևիկեան պայքարը իր տրամաբանական վախճանին հասցնելու համար, ամենահիմնական միջոցը գիւղացիական բռունցքը կազմակերպելն է:

Հակաբոլշևիկեան պայքարի բոլոր գործերից սա, համեմատաբար, ամենադիւրին գործն է: Ընդգծում ենք «համեմատաբար» խօսքը, որովհետև մեզ քաջ յայտնի է, թէ որքա՛ն ծանր պայմաններ են ստեղծուած Խ. Հ. Միութեան մէջ, առհասարակ ո՛ևէ քաղաքական պայքարի համար:

Բոլշևիկները պարծենում են իրենց իշխանութեան ուժով: Չենք ժխտում այդ ուժը. բայց դրա մէջ բացառիկ արժանիքներ չենք տեսնում «պրոլետարական» դիկտատուրայի համար: — Ամէն իշխանութիւն, եթէ բացայայտ աւազակի դեր ստանձնելով, թքնի մարդկային բոլոր արժէքների վրա, իր դիրքը պահպանելու համար — ուժեղ կը լինի: Ապացոյց՝ քեմալական և ֆաշիստական բռնապետութիւնները, որոնք բաւականաչափ ամուր դիրք ունեն և ուժեղութեան տեսակէտից բոլշևիկեան բռնապետութիւնից յետ են մնում այն չափով միայն, ինչ չափով նրանք դեռ չեն համարձակւում մարդկային կեանքը, խիղճը, պատիւը և մնացած սրբութիւնները բոլշևիկեան գազանութեամբ ոտնահարելու...

Գիւղացիական բռունցքը կազմակերպելու համեմատական դիւրութիւնը պայմանաւորուած է այն խոր ատելութեամբ, որ տածում է գիւղացիութիւնը դէպի բոլշևիկեան ռեժիմը. մի ատելութիւն, որ նախ և առաջ հիմնաւորւում է գիւղացիութեան իրաւազուրկ վիճակով Խ. Հ. Միութեան մէջ: Բոլշևիկները, այս իրաւազրկութիւնը քօղարկելու համար, իրենց իշխանութիւնը «բանւորա-գիւղացիական» անունով են մեծարում: Բայց ո՞ւմ կարելի է խաբել նման խաղով, երբ ամենքը գիտեն, որ այդ իշխանութեան մէջ յիսուն գիւղացի մի բանւորի հաւասար ընտրական ձայն չունեն: Հեռուները չերթալով՝ բաւական է, որ գիւղացին մի րոպէ աչքի առաջ բերի երկրի իրական իշխանութիւնը ներկայացնող Կոմունիստական Կուսակցութեան համագումարների ընկերային կազմը, որպէսզի վայրկեանապէս զգայ իր խղճալի դերը այդ իշխանութեան մէջ: Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ վերջին, 16րդ Համագումարում, վճռական ձայնի իրաւունք ունեցող բանւորները կազմում էին 71,2%, պետական և հանրային պաշտօնեաները 22,1%, իսկ գիւղացիները միմիայն 6,7%... Այս վիճակագրութիւնը, եթէ մի կողմից չափանիշն է հանդիսանում այն չնչին ազդեցութեան, որ ունի գիւղացիութիւնը երկրի իրական իշխանութեան մէջ, միւս կողմից էլ յստակօրէն ցոյց է տալիս, թէ որքա՛ն խորն է նրա ատելութիւնը դէպի այդ իշխանութիւնը...

Այս ատելութեան վտանգաւորութիւնը կռահելով՝ բոլշևիկներն աշխատում են ջլատել գիւղացիութեան ուժը՝ գիւղում «դասակարգային պայքար»՝ կազմակերպելով բատրակի (ընչազուրկ) և «կուլակի» (ունեւոր գիւղացի) միջև: Սակայն, մե՞ծ ջանք է հարկաւոր այս «դասակարգային պայքարի» խեղկատակութիւնը մերկացնելու համար, երբ այնքա՛ն հեշտ է յետին բատրակին էլ ցոյց տալ, թէ ի՛նչ ողորմելի տնտեսական արժէք է ներկայացնում Խ. Հ. Միութեան «կուլակը» նախապատերազմեան Ռուսաստանի կամ այսօրուայ եւրոպական որևէ երկրի միջին գիւղացու համեմատութեամբ...

Իսկ եթէ օրինականացուած իրաւազրկութեան և դաւադրական ջլատումների այս մերկապարանոց փաստերին կցենք բոլշևիկեան Չեկայի և վարչական ու դատաստանական օրգանների վայրագ հալածանքները գիւղացիութեան դէմ՝ սկսած սովորական ծեծից մինչև բանտն ու աքսորը, մինչև յայտնի ու անյայտ գնդակահարութիւնները. իսկ եթէ այս ամենի վրա աւելացնենք այն անսանձ տնտեսական կեղեքումը, որին ենթարկւում է գիւղացիութիւնը մոնգոլական հարկերի, հացամթերման թալանի, արհեստական գների, անհաշիւ բռնագրաւումների, կաշառքի և բազմապիսի այլ աւազակութիւնների ձևերով. վերջապէս, եթէ այս բոլորի հետ միասին վերյիշենք բոլշևիկների կատարած այն բազմաթիւ խելագար փորձարկութիւնները՝ հոկտեմբերեան յեղաշրջումից մինչև հիմա՝ գիւղացիական տնտեսութիւնն ու կեանքը «բարձրացնելու» համար — փորձարկութիւններ, որոնք քայքայել են գիւղացու տնտեսութիւնն ու բարեկեցութիւնը, խախտել նրա ընտանեկան բարօրութիւնը, ոտնահարել նրա բարոյական սրբութիւնները — այն ժամանակ միանգամայն պարզ կը լինի, որ գիւղացիութեան կեանքի դժնդակ պայմաններն արդէ՛ն կծկել են նրա բռունցքը բոլշևիկեան իշխանութեան դէմ և բոլշևիզմի թշնամիներին մնում է լոկ այն անել, որ այդ կռուփը յարմար վայրկեանին և յարմար ձևով իջնի ատելի իշխանութեան գլխին...

Այսպիսով, տեսնում ենք, որ հակաբոլշևիկեան պայքարը — լինի նրա նպատակը խորհրդային ռեժիմի տապալումը թէ միայն նրա սանձահարումը, միևնոյն է — պէտք է առաջին հերթին կենտրոնանայ գիւղում: Գիւղն է եղել այդ ռեժիմից ամենամեծ չափով տուժողը, գիւղն է եղել նրան պատուհասողը մինչև հիմա և գիւղը պէտք է լինի նրան տապալողը կամ սանձահարողը, ինչպէս որ այդ նորից մի անգամ ակներևօրէն ցոյց տւին կոլխոզային փորձարկութիւնը և հակակոլխոզային շարժումները:

Մեր չորրորդ եզրակացութիւնը այս շարժումից, յենւում է այն փաստի վրա, որ կարմիր զօրքը չդնաց ապստամբուած ժողովրդի դէմ, իսկ տեղ տեղ էլ միացաւ նրան ընդդէմ բռնաւորների: Այս մասին վկայում են ոչ միայն Հայաստանից ու Ադրբէջանից ստացուած հաղորդագրութիւնները, այլև բոլշևիկ ղեկավարները Կոմկուսի համագումարներում կարմիր զօրքի տրամադրութիւնների վերաբերմամբ մտահոգիչ ակնարկներ անելով:—

Կարմիր զօրքի՝ և մանաւանդ Հայաստանի կարմիր զօրքի մասին, մենք միշտ դրական կարծիք ենք ունեցել: Մենք չարունակ այն համոզման ենք եղել — և հիմքեր ենք ունեցել այդպիսի համոզման համար — որ ժողովրդի ծոցից և գիւղաւորապէս գիւղական աշ-

digitised by A.R.A.R.@

*խարհից եկած մեր երիտասարդները լցուած են ատելութեամբ դէպի բոլշեւիկները:*

*Վերջիններս՝ շատ լաւ իրազեկ են այս ատելութեան՝ և ջանք չեն խնայում նրան չէզոքացնելու կամ նրա հաւանական հետեւանքները կանխելու:*

*Սրա համար բոլշեւիկները նախ և առաջ աշխատում են սիրաշահել զօրքը՝ նրա առօրեայ կարիքները հոգալով: Հայաստանում ով ունենայ թէ չունենայ՝ կարմիր զօրքը միշտ ունի իր հացը, միսը, հագուստը, տաք օթեւանը և մինչև իսկ զւարճութիւնները:*

*Միևնոյն ժամանակ, նրանք ամենայն եռանդով ջանում են կարմիր զինուորներին ենթարկել իրենց պրոպագանդին՝ նրանց համար յատուկ դասընթացներ բանալով, բանախօսութիւններ տալով, շարժապատկերներ ներկայացնելով, հանդէսներ կազմակերպելով և այլն:*

*Բայց որովհետև հայ կարմիր զինուորը — եթէ ոչ ուղղակի՝ գէթ անուղղակի միջոցներով զգալ է տալիս բռնապետներին, որ նրա մէջ մարդկային սիրտ է բաբախում և այս մարդկային սիրտը չի հաշտւում այն բռնութիւնների ու կեղեքումների հետ, որոնց ենթարկւում են, ամբողջ ժողովրդի հետ միասին, նրա հայրը, եղբայրը, ազգականներն ու հարևանները, այդ պատճառով էլ բոլշեւիկները միշտ կասկածով և անվստահութեամբ են վերաբերւում դէպի կարմիր զօրքը, մանաւանդ որ նրա ձեռքին սուրն և փամփուշտ կայ:*

*Այս կասկածով ու անվստահութեամբ պէտք է բացատրել, որ բոլշեւիկները, բացի պաշտօնական կոմիսարներից, լրտեսական մի մեծածախս կազմակերպութիւն են պահում յատկապէս կարմիր զօրքի շարժումների վրա հսկելու համար և արտակարգ նախանձախնդրութեամբ հետեւում, որ նրա հրամանատարական կազմը, ջախջախիչ մեծամասնութեամբ, կոմունիստներից կազմուած լինի: Այսքանն էլ դեռ բաւական չհամարելով նրանք, Չեկայի անմիջական ղեկավարութեան տակ, առանձին զօրամասեր են պահում, որպէսզի, ի պահանջել հարկին, զինուած ուժով զսպեն կարմիր զօրքի ըմբոստութիւնը:*

*Կանխազգուշական միջոցների այս առատութիւնը անհրաժեշտօրէն բերում է այն եզրակացութեան, որ կարմիր զօրքի մէջ աշխատելու բաւական արգաւանդ հող ունին այն բոլոր յեղափոխականները, որոնք կեանքի և մահուան պայքար են մղում բոլշեւիկեան ռեժիմի դէմ: Այդ աշխատանքն անշուշտ շա՛տ աւելի դժուարին է, քան թէ գիւղացիութեան բռունցքը կազմակերպելը, քանի որ բոլշեւիկեան լրտեսութիւնը առանձին խնամքով ծաւալուած է զօրանոցներում: Բայց, սրա փոխարէն, նրա արդիւնքն էլ շա՛տ աւելի նշանակալից է «յեղափոխութեան ծննդաբերութիւնը» կարծելու տեսակէտից:*

*Սակայն, այս յեղափոխական աշխատանքը նպատակ չպէտք է ունենայ կարմիր զօրքի քայքայումը: Ինա՛ւ և երբե՛ք: Ընդհակառակը, այն ամենը, ինչ որ կարելի է անել այդ զօրքը աւելի՛ ևս ուժեղացնելու համար, պէտք է արուի, որպէսզի նա արտաքին թշնամու դէմ միշտ կազմ և պատրաստ լինի:* Մեր նպատակը պէտք է լինի միայն փաստական սնունդ տալ կարմիր զինուորի զգացական առնչութեանը դէպի բոլշեւիկեան բռնապետութիւնը՝ անդադրում մերկացնելով վերջինիս հակաժողովրդական դաւերն ու արարքները՝ և այդպիսով արգելք հանդիսանալ, որ նա, բոլշեւիկների խարեբայութիւններին զոհ գնալով, գործիք դառնայ նրանց ձեռքին ընդդէմ հարազատ ժողովրդի:

*Հակակոլխոզային շարժումների ժամանակ, կարմիր զօրքը ապացոյցներ տուեց, որ մեր այս առաջադրութիւններն խիստ մօտ է նրա տրամադրութիւններին: Եւ սա պէտք է խթան հանդիսանայ այդ տրամադրութիւններն աւելի՛ ևս մշակելու համար:*

*Մեր հինգերորդ և վերջին եզրակացութիւնը ևս ելնում է մի փաստից — մի վերին աստիճանի ուշադրաւ փաստից: Խօսքը վերաբերում է այն ազգային համերաշխութեանը, որ երևան բերին անդրկովկասեան գիւղացիները, և մասնաւորապէս հայ և թաթար գիւղացիները, հակակոլխոզային շարժումների ժամանակ: Այս համերաշխութիւնը միաբերան վկայում են շարժումների մէջ անմիջական մասնակցութիւն ունեցած հայերն ու թաթարները, ինչպէս նաև Երկրային Կոմիտէի քարտուղար Օրախելաշվիլին՝ Անդրկովկասեան Կոմունիստական Կուսակցութեան համագումարին ներկայացրած զեկուցման մէջ:*

*Եթէ մի կողմ թողնենք ազգային համերաշխութեան մասին մինչ օրս եղած սնամէջ հաւաստիացումները, որոնցով բոլշեւիկներն ուզում են քողարկել կուլիսների յետևը խաղացող ազգային հակամարտութիւններն Անդրկովկասում — ապա կը տեսնենք, որ կոլխոզային պայքարների ընթացքին երևան եկած ազգային համերաշխութիւնը իրապէս առաջինն է այն օրից ի վեր, երբ բոլշեւիկները ոտք են դրել Անդրկովկաս:*

*Չենք ուրանում, որ այս իրական ազգային համերաշխութիւնը՝ նուիրագործուած միասին թափուած արիւնով՝ մենք պարտական ենք բոլշեւիկներին: Չկարողանալով անդրկովկասեան ժողովուրդների մէջ ազգային համերաշխութիւն ստեղծել կոմունիստական բարբաջանքներով՝ նրանք այդ համերաշխութիւնը ստեղծեցին բոլոր ժողովուրդների դէմ ուղղուած վայրագ ճնշումներով ու հալածանքներով:*

*Թէ այս նոր «նուաճումը» ի՛նչ չափով կարող է մխիթարել բոլշեւիկներին, չգիտենք. բայց մենք չափազանց գոհ ենք նրանից: Գոհ ենք, որովհետև նա մեզ փաստական հիմք է տալիս ամրապնդւելու այն համոզման մէջ, որ եթէ անդրկովկասեան ժողովուրդները, և մասնաւորապէս հայերն ու թաթարները, գիտակցեն, որ արտաքին թշնամիները — լինեն նրանք հիւսիսից եկող բոլշեւիկներ, թէ հարաւից եկող քեմալականներ — վտանգ են ներկայացնում ամենքի համար՝ նրանց փոխյարաբերութիւնների մէջ այնպիսի նոր և պայծառ զարգացլուխ կը բացուի, որ այլ ևս ո՛չ ռուս բոլշեւիկները, ո՛չ թիւրք քեմալականները չեն կարող խաղալ նրանց ներքին ներհակութիւնների վրա՝ իրենց իմպերիալիստական ախորժակներին յագուրդ տալու համար...*

*Մինչև հիմա մենք որոշ չափով թերահաւատ էինք այս ազգային համերաշխութեան մօտալուտ լինելու նկատմամբ. որովհետև անդրկովկասեան ժողովուրդ-*

digitised by A.R.A.R.@

ների հին հակամարտութիւնները մեր աչքի առաջ օր ըստ օրէ աւելի՝ ու աւելի էին սրւում շնորհիւ այն հանգամանքի, որ բոլշեւիկները, մաքիավելիական քաղաքականութեամբ, շարունակ բաժան-բաժան էին անում այդ ժողովուրդներին՝ իրենց տիրապետութիւնը նրանց վրա հաստատ պահելու համար:

*Բայց քանի որ ազգային համերաշխութեան փաստը ինքնաբերաբար ստեղծուած է ժողովրդական զանգուածների մէջ հակակոլխոզային շարժումների ժամանակ, մենք, համապատասխան եզրակացութիւն հանելով այս փաստից,* պէտք է առանձին եռանդով աշխատանք թափենք ներշնչելու անդրկովկասեան ժողովուրդներին, որ նրանց ճակատագրերը սերտօրէն շաղկապուած են միմիանց, որ նրանց թշնամիներն ընդհանուր են և որ այդ թշնամիների դէմ միացեալ ճակատ կազմելը կենսական անհրաժեշտութիւն է հանդիսանում ամենքի փրկութեան համար…

Այս եզրակացութիւնների մէջ են ամփոփուած գըլխաւոր դասերը, որ տալիս են հակակոլխոզային շարժումները՝ մեր պայքարը բոլշեւիկեան ռեժիմի դէմ լայնացնելու և խորացնելու համար:

Սակայն, այդ դասերից ընդարձակօրէն օգտուելով հանդերձ, մենք չպէտք է թոյլ տանք, որ բուրժուայետադիմական տարրերը զէնք դարձնեն իրենց ձեռքին բոլշեւիկների կոլխոզային փորձի ողբալի արդիւնքը՝ առհասարակ հաւաքական տնտեսութեան գաղափարի դէմ: Ճիշտ այնպէս, ինչպէս այդ չենք կարող թոյլ տալ, որ նրանք բոլշեւիկեան ընկերվարութեան վիժուածքը զէնք դարձնեն իրենց ձեռքին իսկական ընկերվարութեան դէմ:

Հաւաքական տնտեսութեան գաղափարը գրեթէ բոլոր ընկերվարական կուսակցութիւնների առաջադրութիւնն է հանդիսանում: Մի առողջ գաղափար է դա, որ արդէն ինքնաբերաբար նուաճումներ է կատարում եւրոպական շատ երկրներում՝ գիւղացիների մէջ հաւաքական տնտեսութեան բազմապիսի ձեռնարկներ առաջ բերելով և ահագին նիւթական շահեր ապահովելով նրանց համար:

Ընկերվարական կուսակցութիւնները, մանաւանդ համաշխարհային պատերազմից յետոյ, ամենայն եռանդով հետապնդում են հաւաքական տնտեսութեան ձեռնարկներն աստիճանաբար բազմացնելու և համապարփակ դարձնելու: Սրա պատճառը նախ այն է, որ հաւաքական տնտեսութիւնը խիստ զգալի չափերով բարձրացնում է գիւղացու բարեկեցութիւնը՝ նրա աշխատանքի պայմանները դիւրացնելով և նրա վաստակը շուկայի շահագործումներից պաշտպանելով.— իսկ յայտնի է թէ ի՛նչ կարևոր տեղ է բռնում աշխատաւորի բարեկեցութիւնը ընկերվարական մտահոգութիւնների մէջ: Այնուհետև՝ ընկերվարական կուսակցութիւնները, որ վաղուց են դադարել հաւատալուց մարքսիզմի հաւաստիացումներին՝ թէ գիւղական աշխարհը եւս կապիտալիզմի բովից պէտք է անցնի ընկերվարական կարգերի հասնելու համար՝ եկած են այն եզրակացութեան, թէ գիւղացիութիւնը դէպի ընկերվարութիւն առաջնորդելու լաւագոյն ճանապարհը հաւաքական տնտեսութիւնն է, որ անհրաժեշտաբար մեղմում է գիւղացու անհատապաշտական և մասնաւոր-սեփականատիրական տրամադրութիւնները, հրահրում նրա ընկերային բնազդները և, մի խօսքով, ստեղծում այն հոգեբանական նախադրեալները, որոնք ընկերվարական հասարակակարգի տարերքն են կազմում և առանց որոնց «ընկերվարութիւն կառուցանելու» բալդ փորձերը՝ լինեն նրանք «մի երկրում» թէ շատ երկըրներում, անխուսափելիօրէն պիտի վիժեն:

Եւ եթէ այսօր հաւաքական տնտեսութեան այս գեղեցիկ գաղափարը, շնորհիւ բոլշեւիկեան խելագար քաղաքականութեան, զանգուածների աչքում հոմանիշ է դարձել թալանի, աւազակութեան և զանգուածային հալածանքների՝ դա դեռ ոչինչ չի կարող նշանակել գիտակից մարդկանց համար:

Բոլշեւիկեան ռեժիմի տակ բոլոր յառաջադիմական գաղափարներն ու ծրագրները դատապարտուած են այլասերուելու: Սրա համար էլ, եթէ այդ ռեժիմի պատճառով հաւաքական տնտեսութեան գաղափարն այլանդակուած է, սա մեզ համար մի նոր առիթ պէտք է հանդիսանայ աւելի՝ եւս զօրացնելու մեր պայքարն այդ ռեժիմի դէմ և ոչ թէ երես դարձնելու խաչուող գաղափարից, ինչպէս բուրժուա-յետադիմական գաղափարախօսներն են տրամաբանում:

Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

# ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋ

Օրուան կարևոր խնդիրն է Քիւրտերու ապստամբութիւնը:

Հինգ տարուան դադարէ մը վերջ — որու ընթացքին սակայն միշտ շարունակուեցան տեղական կռիւները — Քիւրտերը զանգուածային ապստամբութեան դիմեցին դարձեալ և քանի մը ամիսէ ի վեր լրջօրէն կը զբաղեցնեն քեմալական բանակը: Ինչպէս կը շեշտէ Մ. Քեմալի հաւատարիմ պաշտպանը՝ երեսփոխան Ֆալիհ Րըֆգը պէյ Միլլիյէթի մէջ, այս անգամուան ապստամբութիւնը շատ աւելի լուրջ է և լաւ կազմակերպուած՝ քան 1925-ին Շէյխ Սայիտի շղթայազերծած տարերային շարժումը: Քրտական այդ առաջին ապստամբութիւնը խեղդուեցաւ արիւնի մէջ: Շարժման բոլոր պարագլուխները ձերբակալուեցան. անոնցմէ հարիւրաւորներ Էնկիւրիի մէջ կախաղան բարձրացուեցան կամ գնդակահարուեցան: Այնուհետև հազարաւոր քիւրտ ընտանիքներ բռնի տեղահանութեան ենթարկուեցան: Ամբողջ գիւղեր պարպուեցան, ու մեծով պզտիկով Արևելեան Նահանգներէն տեղափոխուեցան դէպի Թիւրքիոյ արևմտեան շրջանները — յիշեցնելով 1915ի հայկական Մեծ Եղեռնը:

Էնկիւրիի վարիչներուն այս հալածանքը ժողո-

digitised by A.R.A.R.@

վուրդի մը դէմ, որ դեռ երէկ ո՛չ մէկ տարբերութիւն կը ցուցնէր կրօնակից Թիւրքէն, հանրային թէ անհատական կեանքի մէջ, աւելի եւ խորացուց այն վիհը, որ բացուած էր ծագումով արիական քիւրտ ցեղին և թուրանական Թիւրքին միջև: Քիւրտ ազատատենչ ժողովուրդը շուտով հասկցաւ Թիւրքիոյ նոր ղեկավարներուն ծրագիրը՝ զինք ստրկութեան մէջ պահելու և ի վերջոյ բնաջնջելու մասին: Ու կազմակերպուեցաւ ազատութիւն ձեռք բերելու նպատակաւ, համոզուած վերջնական յաղթանակին մասին: Դարերէ ի վեր նոր Թիւրքիոյ արևելեան և հարաւային սահմաններուն վրայ կը բնակին մեծ թիւով Քիւրտեր: Դժուար է ճշգրիտ քանակ մը որոշել: Սակայն, նկատի առնելով Քիւրտերու բազմածնութիւնն ու ռազմական բնատուր ձգտումները, անոնք տևական փորձանք են Թիւրքիոյ գլխուն:

Նոր շարժումին մասին Թիւրք թերթերը սկսան արտայայտուիլ յունիսի վերջերը: Առաջին լուրը հասաւ Պայազիտէն: Իբրև թէ Թիւրք զինուորներ և օդանաւեր յարձակում գործած են սահմանագլուխին վրայ՝ պատժելու համար Արարատի շրջանին մէջ «արջառի գողութիւն ընող աւազակները»: Այս խեղաթիւրումը երկար չտևեց և Էնկիւրիի պաշտօնական գործակալութիւնը ստիպուեցաւ խոստովանիլ քրտական նոր շարժման մը գոյութիւնը:

Ըստ Թրքական աղբիւրներու, առաջին կռիւները Արարատի շուրջ, սկսած են յունիս 9-ին, իսկ յունիս 19-ի գիշերը, քրտական ուժեր Արարատի և Պայազիտի շրջանէն յառաջանալով յարձակած են Վանի սահմանագլուխի գիւղերուն վրայ: Յունիս 20ին 110 քիւրտ հեծեալներ, աշիրէթապետներու առաջնորդութեամբ, Պարսկաստանի Նէքմալ գիւղէն մեկնելով մտած են Թրքական հողամասը՝ Զիլանի լեռնային շրջանին մէջ: Անոնց միացած է Հայտարանլը ցեղախումբը:

Նոյն աղբիւրէ հասած տեղեկութիւններ կը հաստատեն թէ ապստամբական շարժման շրջագիծը բաւական լայն է և անոր մէջ կը մտնեն Արարատի, Ալաշկերտի, Ալատաղի, Արճէշի, Մալազկերտի և Աբաղայի շրջանները:

Ապստամբութեան առաջին լուրերուն հետ տեղեկութիւն առնուեցաւ նաև, որ Թիւրք կառավարութիւնը ճակատ ղրկած է 10,000 զինուորներ և մեծ թիւով օդանաւեր: Այսքան մեծ եռանդ և փութկոտութիւն՝ ցոյց կուտան թէ ո՛րքան լուրջ է շարժումը:

Թիւրքերը կը պնդեն թէ Քիւրտերուն կաջակցի պարսիկ կառավարութիւնը: Ճիւմհուրիյէթ յուլիս 5-ի թիւով կը գրէ.— «Մեր մասնաւոր տեղեկութեանց համաձայն, պարսիկ կառավարութիւնը բացէ ի բաց, առանց քաշուելու, կաջակցի հրոսակներուն՝ անոնց կենսամթերք և զէնք հայթայթելով: Այս պարագան հաստատապէս ստուգուած է: Կառավարութիւնը, իբրև Թարգման Թիւրք հանրային կարծիքին զգացած անհուն ցաւին և ենթարկուած ջղայնութեան, մեր դեսպան Մէմտուհ Շէվքէթ պէյի միջոցաւ ծանուցագիր մը տուած է Թեհրանի կառավարութեան: Մեծապէս կը յուսանք և կը մաղթենք, որ Թեհրանի կառավարութիւնը չպիտի ուշանայ տեսնել կացութեան փափկութիւնն ու կարևորութիւնը և անկեղծ միջոցներ ձեռք պիտի առնէ՝ վերջ տալու համար այս վիճակին»:

Յայտնի չէ թէ ո՛րքան ստոյգ են Թիւրք թերթերու վերագրումները պարսիկ կառավարութեան հասցէին: Սա՛ յայտնի է միայն, որ քրտական շարժման պատճառաւ սահմանակից երկու պետութեանց դիւանագիտական յարաբերութիւնները որևէ ցնցում չկրեցին: «Պոլսոյ պարսիկ շրջանակները — կը պատմեն Թիւրք թերթերը — յայտնած են, որ պարսիկ կառավարութիւնը բան մը չի կրնար ընել քիւրտ հրոսակներուն դէմ, երբ անոնք իր սահմանէն ներս մտնեն: Արարատը, որ Թիւրքիոյ, Ռուսիոյ և Պարսկաստանի սահմաններուն վրայ կը գտնուի, տարիներէ ի վեր աւազակներու որջ դարձած է: Այս լերան վրայ կը բնակի Ճէլալի կոչուած 150,000 հոգինոց ցեղ մը, որուն գրեթէ բոլոր մարդիկը զինուած են և ձիաւոր: Վաչկատուն են և գիւղեր չունին: Այս ցեղը յաճախ պարսից հողին վրայ ալ կապատակէ. այն ատեն կառավարութիւնը դրամով իր կողմը կը շահի անոնց մէկ մասը և միւսներուն վրայ կը ղրկէ զինելով: Անկարելի է զսպել զանոնք, քանի որ լեռը սահմանագլուխ է և կրնան մէկ երկրէն միւսը ապաստանիլ: Ատենօք, Ճէլալիները ցարական Ռուսիոյ գլխուն ալ փորձանք եղած են»:

Օտար աղբիւրներէ հասած լուրերն ալ կը հաստատեն ապստամբական շարժման կարևորութիւնը: Թայմըզի Պոլսոյ թղթակիցը յուլիս 9 թւակիր հեռագրով մը կը հաղորդէ թէ քիւրտաթիւրք ընդհարումները փոխադրուած են Վանի հիւսիս-արևելեան կողմը և Քիւրտերը կը ջանան կտրել Վանի ճամբան: Շարժումը վարող Քիւրտերու սպայակոյտը կը գտնուի Սիփան լերան վրայ: Ապստամբները յաջողած են հասնիլ մինչև Արճէշ և կողոպտել գիւղը, բայց ետ մղուած են Թիւրքերուն կողմէ:

Թղթակիցը կաւելցնէ, որ ոստիկաններ խուզարկած են կարգ մը Հայերու տուները, այն կասկածով, թէ անոնք կապ ունին քրտական ապստամբութեան հետ: Վագըթ և ուրիշ Թրքական թերթեր մասնաւորապէս կը շեշտեն Հայերու գործակցութիւնը քրտական ներկայ շարժման մէջ... առանց, սակայն, որոշ փաստեր կարենալ յիշելու:

Թրքական ուժերու հրամանատարն է Սալիհ փաշա, որ իր տրամադրութեան տակ ունի 12,000 կանոնաւոր զինուոր և ոստիկան-զօրք: Իսկ Քիւրտերու ղեկավարներն են՝ Քէօր Հիւսէյինի տղան Էմին փաշա, Իպրահիմ փաշայի տղան ու գնդապետ Մահմուտ պէյ, օսմանեան բանակէն: Ամենէն կատաղի կռիւը տեղի ունեցած է յունիս 24–26 Արճէշի հիւսիսային կողմը, Զիլանի ձորին մէջ:

Քիւրտերը յաջողած են քանի մը Թրքական սաւառնակներ վար առնել Արարատի շրջանին մէջ: Այս պարագան ցոյց կուտայ թէ ապստամբները զինուած են բոլորովին արդիական զէնքերով:

Լուրի մը համաձայն, Թիւրք զինուորները պարսիկ սահմանագլուխէն մինչև 75 քիլոմետր ներս մտած են՝ ապստամբները հետապնդելու համար: Միջազգային իրաւունքի տրամադրութեանց այս ձևով բռնաբարումը կրնայ դիւանագիտական բարդութիւններ առաջ բերել:

Իսկ ինչ որ այպանելի է, բոլշևիկ կառավարու-

digitised by A.R.A.R.@

թեան բռնած դիրքն է: Քիւրտ և Թիւրք այս ընդհարումին մէջ, Մոսկուան բացէ ի բաց կաշառակցի Էնկիւրիի դահիճներուն: Փոխանակ քաջալերելու ճնշուած և ընչազուրկ ժողովուրդի մը ազատագրական պայքարը ընդդէմ բռնակալ իշխանութեան մը՝ կարմիր ասպետները, ընդհակառակն կոնակէն կը հարուածեն Քիւրտերը: Ռուս պահակազօրքը կրակ բացած է կարգ մը ապստամբներու վրայ, որոնք նեղը մնացած ըլլալով, կը փորձէին ապաստանիլ ռուսական սահմանը: Միւս կողմէ, Իգտիրի ենթակայ Քոնաքլար գաւառակին մէջ քրտական յարձակումի մը ընթացքին, ռուս սահմանապահներու հրամանատարը լուր ղրկած է Թիւրք հարիւրապետին՝ ըսելով, թէ իր կառավարութենէն հրահանգ ստացած է ի հարկին օգնելու Թիւրք զինուորներուն...

Թիւրք թերթերը կը գրեն, թէ կռիւներու ընթացքին 300 Քիւրտեր սպանուած են և 200 գիւղեր այրուած: Տարակոյս չկայ, թէ սպանուածները Թրքական սահմանին մէջ մնացած անզէն ու անպաշտպան Քիւրտերն են — կին և երեխայ, որոնք զոհուած են Թրքական ծանօթ բարբարոսութեան:

Ապստամբական այս շարժումին հետ զուգընթաց՝ Թիւրքերը սարքած են քրտական դատավարութիւն մը: Ամէն կողմ վխտացող լրտեսներու մատնանշումին վրայ, ձերբակալուած են Շէյխ Սայիտի տղան, Սալահէտտին և քանի մը ընկերները, որոնք յաջողած էին Թրքական հող մտնել և կազմակերպել հոն մնացած աշիրէթները: Ասոնք գաղտնի կազմակերպութիւն մը ստեղծած էին Արևելեան Նահանգներուն մէջ՝ «Հիւսիսային Քիւրտիստանի Միութիւն» անունով: Էրզրումի մէջ ալ ձերբակալուած են ուրիշ Քիւրտեր նոյն ամբաստանութեամբ և ճամբայ հանուած դէպի Էնկիւրի՝ դատուելու համար: Ասոնք «Հոյբուն»ի անդամներն են: Մուշի մէջ ևս նման դատավարութիւն մը սկսած է: Գրաւուած են կարգ մը թռուցիկներ, որոնց մէջ Քիւրտերուն կը թելադրուի լեռներէն վար իջնել և աջակցիլ ապստամբող խումբերուն:

Էրզրումի մէջ ձերբակալուածներու քովէն գտնուած են քիւրտերէն կնիքներ՝ «Հօկիրի Վէէվին» (Բարեկամներու Միութիւն), Հէչիf Թուէվի (Ընդհ. կեդրոն) արձանագրութիւններով: Գրաւուած են նաև զանազան մասնաճիւղերու կնիքները:

Վագըթի մէջ Մէհմէտ Ասըմ պէյ կասկածներ կը յայտնէ Անգլիոյ մասին: «Միջագետքի հոգատար Անգլիան, կ'ըսէ, քրտական քաղաքականութիւն կը վարէ Մուսուլի մէջ, ինչ որ մութ կէտ մըն է, մեր Արևելեան Նահանգներու անդորրութեան տեսակէտով: Անգլիական կառավարութիւնը երբեք չէ ծածկած թէ նպատակ ունի Քիւրտերէն կազմուած անկախ ազգ մը առաջ բերել հիւսիսային Միջագետքի մէջ: Վերջերս ալ կարևոր ձեռնարկներ ըրաւ, այս նպատակը իրականացնելու համար: Արդե՞օք որևէ կապ կայ հիւսիսային Միջագետքի մէջ քիւրտ անկախ ազգ մը կազմելու ձգտող այս կազմակերպութեան և Արարատի շուրջ երևան հանուած դրդութեանց փաստաթուղթերուն միջև: Ահա՛ այս պարագան է, որ կասկած կը ներշնչէ մեզի»:

Ուրիշ Թիւրք թերթեր խորհրդաւոր դեր մը կը վերագրեն գնդապետ Լօրէնսի, որ մեծ համբաւ շինեց Մեծ Պատերազմի ընթացքին՝ արաբական դիմադրութիւնը կազմակերպելով Թիւրքերուն դէմ և որ անկէ ի վեր կարևոր դերեր խաղացած է Արևելքի մէջ — մանաւանդ Աֆղանիստան:

Մէկ խօսքով, մեծ կարևորութիւն կընծայուի այս շարժումին, որուն համար կըսեն թէ կազմակերպուած է արտասահմանի մէջ, աջակցութեամբ կարգ մը պետութիւններու և 150-նոցներու: Թերթի մը համաձայն, Հալէպի մէջ կարգ մը Քիւրտեր ժողով գումարած են, և որոշած օգնութեան փութալ ապստամբներուն: Յունիս 29-ին, 2000 Քիւրտեր փորձած են ինքնաշարժով սահմանն անցնիլ, սակայն, Րէս-իւլ-Այնէն հեռաձայնով լուր առնուած է և Թիւրք զինուորները ետ մղած են զանոնք:

Հակառակ Թրքական հաւաստումներուն, կռիւները կը շարունակուին դեռ:

Վերջին տեղեկութեանց համաձայն, Էնկիւրի շարժման մէջ դրած է 60.000 զինուորներ և պիտի շարունակէ կռիւը ամիսներով, վճռական հարուած մը տալու համար ապստամբներուն: Այս վերջինները, հակառակ Թիւրքերու այսքան պատրաստութեանց, վճռած են չընկրկիլ և շարունակել անհաւասար կռիւը՝ մինչև իրենց արեան վերջին կաթիլը: Անոնց միացած են Գըզըլպաշներն ու Ասորիները: Կը թուի թէ Թիւրքերը որոշ յաջողութիւն ձեռք բերած են, մանաւանդ պարսկական հողին վրայ, ուր մտած են անարգել և վերադարձած դէպի սահման՝ մաքրագործումի արագ գործողութենէ մը վերջ:

Միւս կողմէ, Մուսուլի շրջանէն 500 քիւրտ հեծեալներ յուլիս 21-22-ի գիշերը յարձակում մը գործած են Հէքքեարիի Օրթան գաւառակին վրայ:

Մեծ բանակ մը շարժման մէջ պահելը միլիոններ պիտի արժէ Թիւրքիոյ: Տնտեսական տագնապը չանհետացած, դրամի կայունացման խնդիրը չլուծուած, Հանրային Պարտքի, արտաքին փոխառութեան և պետական-ազգային դրամատան խնդիրները չկարգադրուած, Էնկիւրի կը պարտադրուի նիւթական նոր զոհողութեանց ենթարկուիլ: Տագնապը աւելի ևս կը շեշտուի այս ձևով: Ասկէ զատ, բացի մարդկային և դրամական կորուստէն, այս ներքին փոթորկումը քաղաքական արտաքին ճակատին վրայ ևս կը ցնցէ Թիւրքիան, որ ատիճան մը ևս կը կորսնցնէ իր վարկը եւրոպական դրամատիրական շուկային վրայ:

Շնորհիւ իր զինուորական լայն միջոցներուն, Թիւրքիա թերևս այս անգամ ևս արիւնի մէջ խեղդէ քրտական շարժումը, սակայն, Քրտական Հարցը, ինչպէս Հայկականը, երբեք չի փակուիր այդպէսով, այլ դամոկլեան սուրին պէս կախուած կը մնայ Էնկիւրիի դահիճներուն գլխուն վերև:

* * *

Յունիս 10-ին Էնկիւրիի մէջ վերջապէս ստորագրուեցաւ հելլէնեթիւրք համաձայնագիրը, Թիւրք արտաքին գործավար Թէվֆիք Րիւշտիի և հելլէն դեսպան Փոլիխրոնիատիսի կողմէ: Այսպէսով, հաշուեյարդարի ենթարկուին 1922-ի հելլենական ծանր պարտութեան հետևանքով ծագած վիճելի բոլոր խնդիրները: Այս

digitised by A.R.A.R.@

համաձայնագիրը քանի մը օր առաջ վաւերացուեցաւ. Հելլէն խորհրդարանին կողմէ, հակառակ Անատոլուի յոյն գաղթականներու բուռն ցոյցերուն և բողոքներուն։

Տարիներու բանակցութիւններն ու սակարկութիւնները այս ձևով կը նուիրագործուին դիւանագիտական վաւերաթուղթով մը։ Համաձայնագիրը անակնկալ նորութիւն մը չի պարունակեր։ Երէկուան թշնամիները պարզապէս կը պահեն իրենց գրաւած կալուածները. միայն Յունաստան աւելի ըլլալով Թիւրքիոյ պիտի վճարէ 425,000 անգլիական ոսկի, որովհետև իր գրաւածները աւելի մեծ արժէք կը ներկայացնեն։ Բացառութիւն կը կազմեն Պոլիսն ու Արևմտեան Թրակիան, ուր տէրերուն պիտի վերադարձուի անշարժ կալուածներու մէկ մասը։

Շնորհիւ այս համաձայնագրին, օսմանեան կամ օտար անցագրով մեկնած Թիւրքերն ու Յոյները կը տիրանան իրենց լքած գոյքերուն, իսկ Պոլսոյ և Թրակիոյ մէջ ապրող Յոյներն ու Թիւրքերը երթևեկի, ամուսնութեան, առևտուրի ևայլն սեղմումներու չպիտի ենթարկուին այլևս։

Համաձայնագրի ստորագրութեան և վաւերացման առթիւ թէ՛ Հելլէն և թէ՛ Թիւրք պետական պատասխանատու անձնաւորութիւններ հանդիսաւորապէս յայտարարեցին թէ երկու երկիրներու միջև բարեկամական սերտ յարաբերութեան և բարի դրացնութեան նոր շրջան մը կը բացուի։ Միւս կողմէ, դրոյց կը շրջի թէ աշնան էնկիւրի պիտի այցելէ Վենիզելոս՝ հելլէնաթիւրք բարեկամութիւնը աւելի հաստատուն հիմերու վրայ դնելու համար։ Անկէ զատ խօսք կայ բարեկամական դաշինք մը կնքելու մասին։ Երկու երկիրներու նաւային ուժերը հաւասարեցնելու համար սկսուած բանակցութիւններն ալ յաջողութեամբ վերջացան։ Մէկ խօսքով, ժամանակի մը համար ապահովուած կը նկատուի խաղաղութիւնը Մերձաւոր Արևելքի արևմտեան շրջանին մէջ։

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԱՄԱԿ ՍԻԲԻՐԻՑ

. . . . . 29 Մայիս 1930

Հարկադրուած էի վերջին թղթակցութիւնս հապճեպով յանձնել սուրհանդակին, ուստի և չկարողացայ այս շրջանի աքսորականների անւանացանկը ներփակել։ Առայժմ կարողացել եմ հաւաքել 47 անուն միայն, և այդ էլ մեծ դժւարութեամբ, որովհետև աքսորականները ցրւած են զանազան կողմեր։ Պիտի ջանամ այս ցանկից դուրս մնացածների մասին ևս տեղեկութիւններ ձեռք բերել և ուղարկել ձեզ։

Ահա հաւաքածս անունները.

1. Հայկ Տէր-Թովմասեան (ուսուցիչ, չիդամլուեցի)
2. Ա. Բաղալեան (այգեգործ, դալլարցի)
3. Լ. Բաղալեան (նրա եղբայրը, այգեգործ)
4. Տրդատ Արամեան (ուսանող-տեխնիկ, վանեցի)
5. Լևոն Գրիգորեան (ուսանող-տեխնիկ, ախալցխացի)
6. Գառնիկ Գրիգորեան (ուսանող, Ալիղամար գիւղացի)
7. Մկրտիչ Գազազեան (հողագործ, նորբայազէտցի)
8. Խաչիկ Տէր-Յակոբեան (նոյնպէս)
9. Մամիկոն Թումեան (կարմիր բանակային)
10. Միսակ Թովմասեան (նոյնպէս)
11. Բէնիկ Խաչատրեան (այգեգործ, դամարլուեցի)
12. Սուրէն Աւագեան (նոյնպէս)
13. Հ. Կոծանեան (ուսուցիչ, էջմիածնեցի)
14. Արամայիս Բզնունի (այգեգործ)
15. Աւետիս Խոյեցեան (Խցեցեան?) (վարսավիր)
16. Մնացական Եղիազարեան (տեխնիկ)
17. Յոլակ Զաքարեան (ուսուցիչ Այնալու գիւղացի)
18. Գրիգոր Թումայեան (հաշւապահ, էջմիածնեցի)
19. Սուրէն Զանիբէկեան (այգեգործ, աշտարակցի)
20. Գարեգին Իսկանդարեան (այգեգործ, աշտարակցի?)
21. Յ. Ճանճագործեան (մեղւաբոյծ, աշտարակցի?)
22. Գէորգ Զաքարեան (այգեգործ, աշտարակցի?)
23. Սուրէն Օսեան (նոյնպէս)
24. Սարգիս Աւագեան (նոյնպէս)
25. Արշակ Ջաւդարեան (նոյնպէս)
26. Վաչագան Բաբախանեան (այգեգործ, օշականցի)
27. Վարդան Բաբախանեան (այգեգործ)
28. Աղասի Բաղալեան (ուսանող)
29. Մկրտիչ Բաղալեան (այգեգործ)
30. Գէորգ Աղաբէկեան (երկրագործ, դամարլուեցի)
31. Սուրէն Ազատեան (երկաթագործ)
32. Սուրէն Միրզոյեան (ուսանող, Հազարտ գիւղից)
33. Գարեգին Վասիլեան (ուսանող, աւանեցի)
34. Լիպարիտ Պօղոսեան (ուսանող)
35. Կորիւն Եղիազարեան (շօֆեօր, դաշբուրունցի)
36. Թէմուր բէկի որդին (եզիդի)
37. Բաբկէն Գրիգորեան (ատաղձագործ, ղարաղորանցի)
38. Տօնապետ ...... (հողագործ, սասունցի)
39. Բաբկէն Սիւքիասեան (այգեգործ)
40. Տէր Մամբրէ Պօղոսեան (քահանայ)
42. Սարգիս Եսայեան (ուսանող)

digitised by A.R.A.R.@

43. *Հմայեակ Ցովակիմեան* (այգեգործ)
44. *Բէնեամին Գալստեան* (այգեգործ, օշականցի)
45. *Ցակոբ Զարգարեան* (էջմիածնեցի)
46. *Սահակ Թորոսեան*
47. *Կորիւն Ղազարեան*։

*Այս աքսորականներից մի քանիսի նախկին զբաղմունքն ու տեղացիութիւնը չկարողացայ ճշտել։ Մի քանիսի անուններն էլ սխալներ են պարունակում։ Եթէ կարողացայ՝ անհրաժեշտ ճշտումները կանեմ յետագային, միւսների ցանկը կազմելիս։*

*Սրանց մեծամասնութիւնը պաշտօնապէս 3 տարուայ աքսորի է դատապարտուած։ Սակայն, չպէտք է եզրակացնէք, թէ երեք տարուց յետոյ, նրանք պիտի վերադառնան հայրենիք։ «Ընկալեալ սովորութեամբ», աքսորի ժամանակը, լրանալուց յետոյ, միշտ երկարաձգւում է և՛ս մի քանի տարով։ Որովհետև խորհրդային իշխանութեան նպատակը իր համար անհաճելի այս մարդկանցը պատժելը և նոյնիսկ «չէզոքացնելը» չէ, այլ նրանց հիւծելը և ոչնչացնելը։*

*Այս նպատակը յատուկ կերպով երևան է գալիս աքսորականների համար ստեղծուած անտանելի պայմանների մէջ, որոնք քանի գնում, այնքան խստանում են։ Իսկ թէ ի՛նչ պայմաններում ենք ապրում, բերեմ մի քանի օրինակներ.—*

*Վերջին օրերս կարգադրուեց, որ քաղաքական աքսորականներին տարեկան ընդամենը երեսուն ֆունտ (13 կիլօ) ալիւր տրուի, կօօպերատիւի անդամներին տրուելիք արժէքով, այն է՝ փութը երկու րուբլի։*

*Ուտելու ուրիշ բաներ ձեռք բերելու հնարաւորութիւն չունենք։ Կօօպերատիւը չի ծախում, իսկ մասնաւոր խանութներ էլ գոյութիւն չունեն։ Մնում է գիւղացուց գնել։ Սակայն, նա էլ վախենում է վաճառելուց, որովհետև իշխանութիւնը խստիւ պատուիրել է աքսորականներին ոչինչ չծախել։ Եթէ յաջողւում է մի բան գնել, այն էլ ստիպուած ենք գիշերը ծածուկ տանել, որպէսզի մեր պատճառով գիւղացին չհալածուի։*

*Այստեղ կան կօօպերատիւի և սպառողական խանութներ։ Կօօպերատիւի անդամները էլի մի բան ճարում են, ի հարկէ, երկար պոչ բռնելուց յետոյ։ Իսկ ոչանդամները կարող են գնումներ կատարել միմիայն սպառողականում, ուր ապրանքների գները երեք անգամ աւելի թանկ են։ Այսպէս՝ կօօպերատիւում մի անպէտք սանրը մէկ րուբլի արժէ, իսկ սպառողականում՝ երեք, մի արշին հասարակ չիթը առաջինում՝ 50 կոպէկ, երկրորդում՝ 1 րուբլի 50 կոպէկ։*

*Այդ էլ ոչինչ, եթէ ապրանք ճարուէր։ Երևակայեցէք, որ կարկատան չունենք տանից բերած և արդէն մաշուած հագուստը նորոգելու համար։ Անգամ թել ու ասեղ չի ճարւում։ Ոչ էլ գրելու, կամ ծխախոտի թուղթ ունենք։ Ահագին ջանքեր են հարկաւոր նամակի ծրար ճարելու համար։*

*Եթէ տնտեսական այս կացութեանը աւելացնէք նաև բարոյական ու ֆիզիքական ճնշումները, ապա մեր վիճակը միանգամայն պարզ կը լինի։*

*Մեր ընկերներից մէկը բանտում տառապում է յօդացաւից։ Մի օր չեկիստները յայտնում են նրան, թէ իրեն պիտի տանեն բժշկի մօտ։ Վերջինս ուրախացած հետևում է նրանց։ Սակայն, փոխանակ բժշկի մօտ տանելու, կանգնեցնում են ջրի խողովակի տակ և մի լաւ սառը բաղնիք ընդունել տալիս։ Բանտարկեալի տառապանքը նրանց անսահման հաճոյք է պատճառում։*

*Սոլովկայից տեղս փոխադրուած աքսորականները պատմում են, որ այնտեղ աքսորականներն ընդհանուր հացադուլ են յայտարարել, որը տևել է 45 օր։ 25 հոգին չեն դիմացել և մահացել են։ Միւսներին էլ սկսել են արհեստական միջոցներով կերակրել ու տանջել։ Երբ տեսել են, որ հացադուլ անողները յամառում են և չեն զիջում, ստիպուած, մօտ ութ հազար հոգու կղզուց փոխադրում են ցամաքային աքսորավայրերն ու բանտերը։*

*Լսեցինք, որ Տիւմենում, ուր մօտ 2000 բանտարկեալ կայ, 30 հոգու գնդակահարել են։ Իմանալով այդ, աքսորականների մէկ մասին յաջողւում է զինաթափ անել պահակներին ու նրանց զէնքերը վերցնելով, քաշուել անտառները։ Պատմում են, որ նման դէպքեր տեղի են ունենում նաև Սոլովկայի կողմերը**)։

---

## «ՀԱՄԱՏԱՐԱԾ»-Ի ՁՈՀԵՐԸ

. . . . . Յունիս 1930թ.

*Մեր դժբախտ հայրենիքը, վերջին տասնամեակի ընթացքում, դարձել է խելագար փորձերի ասպարէզ։ Տնտեսապէս քայքայուած ու հոգեպէս ընկճուած հայ ժողովուրդը, յանուն «սոցիալիզմի կառուցման» և «համաշխարհային յեղափոխութեան» տուել է և շարունակում է տալ իր տուրքը...*

*«Համատարած» հաւաքական տնտեսութիւնների,* բռնի կերպով, *հարիւր տոկոսով կիրառումը, բացի այն, որ տնտեսապէս քայքայեց ուժասպառ հայ ժողովրդին, քաղաքական տեսակէտից ևս ունեցաւ «համատարած» ծանր հետևանքներ. «կուլակ»-ը որպէս դասակարգ վերացնելու պատրուակով, հարիւրաւոր «անհարազատ» տարրեր, բանտերը և աքսորավայրերը քշելով...*

*Երկիրը գտնւում է ալեկոծուած վիճակում, բանտերը լեցուն են բանտարկեալներով, որոնց խումբ-խումբ քշում են Սիբիրի խորքերը՝ մահուան բաժին դարձնելու, իսկ նրանց աննեցուկ ընտանիքներին՝ սովի մատնելու։*

*Փոքր թիւ չեն կազմում նաև դահիճների ձեռքից ճողոպրածները, որոնք ապաստան են գտել հայրենի լեռներում...Ահա այսպէս են սոցիալիզմ կառուցում...*

*Մանրամասն տեղեկութիւններ, Հայաստանի բոլոր վայրերում տեղի ունեցած բանտարկութիւնների, աքսորների և գնդակահարութիւնների մասին պակասում են... Առ այժմ տալիս ենք արևմտեան շրջաններից ստացուած տեղեկութիւնները.—*

Ղամարլուի շրջան.— *Բանտարկել են 78 հոգի։ Դրանցից՝ մարտ 25-ին գնդակահարել են՝ Դւինեցի Կոստի Թամրազեանին և Դաւալեցի Զենոն Խաչատրեա–*

---

*) Վերջին ամիսները մի շարք նման փախուստի դէպքեր տեղի ունեցան։ Աքսորականներին երբ տանում են անտառ բռնի աշխատեցնելու, նրանց յաջողւում է զինաթափել պահակներին ու անցնել Ֆինլանդական սահմանը։

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

նին. աքսորել են՝ մայիս 17-ին 29 հոգի հետևեալ գիւղերից՝ Բաջղազլուից՝ 2, Այճալուից՝ 5, Արդաշարից՝ 3, Թափաքաշից՝ 1, Դաւալուից՝ 1, Օղըրքչլուից՝ 3, Բաշճալուից՝ 3, Ղարահամզալուից՝ 1, Խփակլուից՝ 2, Ախամզալուից՝ 4, և Թազագիւղից՝ 5. բանտումն են՝ 23 հոգի՝ Ղամարլուից՝ 1, Ջաճճաբլուից՝ 1, Այճալուից՝ 1, Աղբաշից՝ 12. Իփակլուից՝ 2, Դոխկուզից՝ 1, և Թազագիւղից՝ 5. բանտից արձակել են՝ 24 հոգի:

Կոտայք.— Բաշգեառճիից՝ բանտարկել են և անյայտացրել՝ Արտուշ Նալբանդեանին, Քաճաքեռից՝ բանտարկել են 15 հոգի, դրանցից մէկ հոգին բանտումն է, իսկ 14-ին արձակել են: Առինջից՝ բանտարկել են 6 հոգի, մէկ հոգուն աքսորել են, իսկ 5-ը բանտումն են: Կոտայքի միւս գիւղերի մասին տեղեկութիւններ պակասում են:

Ծաղկաձոր.— Արզաքեանից՝ բանտարկել են՝ 2 հոգի, եղբայրներ՝ Արամ և Տիգրան Դաւօեաններին, դրանցից Արամին գնդակահարել են մարտ 25-ին, իսկ Տիգրանը բանտումն է: Ծաղկաձորի միւս գիւղերի մասին տեղեկութիւնները պակասում են: Մարտ 25-ին գնդակահարուած է նաև Նոր-Բայազէտի Թազագիւղի տէրտէրի տղան՝ Յովսէփը:

Արագած.— Սասունցիներից, ապրիլ 2-ին աքսորուած են 6 հոգի, որոնց թւումն է Ղազար Ֆարհատեանը:

Մեղրիի շրջան.— Բանտարկուած են եղել 22 հոգի, ներկայումս բոլորն էլ Երևանի բանտումն են:

Դարալագեազի շրջան.— Բանտարկել են՝ 150 հոգի: Դրանցից աքսորել են՝ 20 հոգի, բանտումն են՝ 50, արձակել են՝ 80 հոգի:

Աշտարակի շրջանից բանտարկել են՝ 300 հոգի:

Յունիս 6-ին Ալեքսանդրապոլի բանտից տեղափոխել են Երևանի բանտը՝ 59 բանտարկեալներ:

Մարտ 12-ին Երևանի բանտից աքսորել են՝ 240 հոգի:

Ներկայումս Երևանի բանտում կան 700 բանտարկեալներ: Այդ թւի մէջ չեն մտնում Չեկայում եղածները:

* * *

Նախիջևանի սակաւաթիւ զօրքը՝ մեծ մասամբ կոմունիստներ, ցրուած է ամբողջ շրջանում: Տեղայի բոլոր կոմունիստներին զինել են, զօրքի հետ միասին, ներքին կարգը պահպանելու համար:

Ապստամբները կազմակերպւում են և օրէցօր իրենց թիւը ստւարացնում: Նրանք յաճախակի և յանկարծակի յարձակումներ գործելով գիւղերի վրա, շրջապատում են, տեղացի կոմունիստներին և կուսակցական զինուորներին անխնայ սպանում, զօրահաւաքի ենթարկուած պահեստի զինուորներին, միացնում իրենց, հաւաքում են նաև ձիերը, տալով կնքուած անդորրագրեր:

Անկուսակցականների հետ վարւում են շատ սիրալիր: Ուտեստի գնումները կատարում են կանխիկ դրամով և փոխարժէքը վճարում լիովին, ըստ վաճառողի գնահատումի:

Նախիջևանի շրջանից աքսորուած են 700 հոգի:

Նման վիճակ է ստեղծուած նաև Զրլնում, Դարալագեազի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Նոր-Բայազէտի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Ղազախի, Գանձակի լեռնային մասերում և Դաղստանում:

Իշխանութիւնը յարձակողականից անցել է պաշտպանողականի և գտնւում է ջղայնացած վիճակում:

ԿՈՏԷ

---

Պետրոգրադ. 13 Յունիս 1930

Նոր վերադարձայ Հիւսիսային Կովկասում կատարած շրջագայութիւնից: Ճ.ւապով հաղորդում եմ ձեզ մի քանի ընդհանուր տեղեկութիւններ: Մանրամասնութիւնները կը գրեմ առաջիկային՝ գործերս կարգի դնելուց յետոյ:—

Հիւսիսային Կովկասում հակաբոլշևիկեան տրամադրութիւնները ծայր աստիճանի լարուած են բոլոր ազգութիւնների մէջ անխտիր: Այն գիտակցութիւնը, որ թշնամին ընդհանուր է բոլորի համար և բոլորին էլ ուզում է ճզմել՝ ստեղծել է մի աննախընթաց համերաշխութիւն ազգային հակամարտութիւններով այնքա՛ն հարուստ այս երկրամասի մէջ:

Դժբախտաբար, սակայն, ընդհանուր ղեկավարութիւն չկայ, որ միասնական գործի ծրագրով առաջնորդի ժողովրդական զանգւածներին: Դրա համար էլ, վերոյիշեալ հակաբոլշևիկեան տրամադրութիւնը մասնակի պոռթկումներով և ըմբոստութիւններով է արտայայտւում:

Վերջին ամիսների ընթացքին, առանձնապէս ուժեղ են եղել ըմբոստութիւններն ու չէթայական կռիւները Կրասնոդարի, Գրոզնիի, Թաթալբաշ կայարանի և Մայկոպի շրջաններում: Կուողները՝ մեծ մասամբ կազակներ, ինգուշներ, օսեր, լեզգիներ և թաթարներ՝ ութ հազարի չափ զինուորական ույժ են ներկայացնում՝ բաժանուած բազմաթիւ խմբերի:

Կառավարութիւնը սկզբում մտածում էր կարմիր բանակի օգնութեամբ ճնշել այս շարժումները, — կայն, տեսնելով, որ կարմիր բանակայինները [illegible] ճութեամբ են դուրս գալիս իր ազատութեան համար մարտնչող ժողովրդի դէմ — մի քանի դէպքերում նրանք մինչև անգամ անցել են ժողովրդի կողմը՝ իրենց զէնքը դարձնելով կառավարութեան դէմ — ուստի որոշեց հանդիստ ձգել զօրքը և միայն Գէպէուի ոստիկաններին և կոմունիստներից կազմուած խմբակներին հանել կռւի դաշտը:

Քաղաքներում կառավարութեանը յաջողւել է որոշ չափով ,,կարգը վերականգնել». սակայն, գիւղերում և մասնաւորապէս լեռնային վայրերում խլրտումները և կռիւները դեռ շարունակւում են:

Ժողովրդի մէջ յամառօրէն խօսում են, թէ արտասահմանեան էմիգրանտները միանալով՝ մեծ ույժ են կազմել հարևան երկրներից մէկում և շուտով պիտի ներս խուժեն Ռուսաստան՝ բոլշևիկների զատաստանն անելու համար: Այս լուրերը շրջան են առնում գլխաւորապէս այն վայրերում, ուր բոլշևիկները կատարելապէս դրութեան տէրն են: Տպաւորութիւնս այն է, որ նրանց տարածողները բոլշևիկ պրովոկատորներն են, որոնք ձգտում են իրենց յարմար վայրերում ըմբոստութիւններ առաջ բերել և «օրինակելի» ջարդեր տալ՝ ժողովրդին ահաբեկելու համար:

digitised by A.R.A.R.@

Հիւսիսային Կովկասում հոծ հայութիւն կայ, որ խռնացած է գլխաւորապէս Մայկոպ–Սոչի գծի վրայ: Հայերն այստեղ մօտ 54 գիւղեր ունին, որոնք մի առանձին ինքնավար շրջան են կազմում, բաւական ամուր դիրքերով:

Մինչև 1927 թիւը այս գիւղերի վիճակը տանելի էր. բայց ներկայիս խիստ ողբալի կացութեան մէջ են բոլշևիկեան հարստահարութիւնների և հալածանքների պատճառով:

Վերջերս այս հայերն էլ արժանացել են բոլշևիկեան պրովոկացիայի ուշադրութեանը: Նրանք Բագւից լուրեր են տալիս, թէ Պարսկաստանում «դաշնակները» ահագին զօրք են կենտրոնացրել՝ Կովկասի վրայ յարձակւելու համար՝ և թէ ժամանակը հասել է, որ ոտքի կանգնեն՝ թշնամու գլուխը հիւսիսում խառնելու և Կովկասի նուաճումը դիւրացնելու համար: Անկասկած նոյն բարի նպատակներով ուրիշներն էլ Սուխումի շրջանում են լուրեր տարածել, թէ ինչ որ պետութիւն խոստացել է աբխազներին և վրացիներին, թէ թոյլ չպիտի տայ կարմիր նաւատորմին դեսանտ հանել Աբխազիայում, որպէսզի Սև Ծովի շրջանի հայերը, Սուխումից մինչև Մայկոպ, առանց թիկունքի կողմից երկիւղ ունենալու, ապստամբութեան դրօշ բարձրացնեն խորհրդային իշխանութեան դէմ… Պատմում էին, թէ «արտասահմանից» երեք անձնաւորութիւններ են եկել համոզելու այդ հայերին, թէ եւրոպական պետութիւնները նրանց համար «Հօմ» են պատրաստել, որպէսզի նրանք, բոլշևիկներից պարտւելու դէպքում, նաւ նստեն և անվնաս գնան հաստատւելու իրենց «Հօմ»ում…

Ի հարկէ, այս շրջանի հայերն այնքան միամիտ չեն, որ ականջ կախեն այսպիսի ցնդաբանութիւնների: Բայց ընդհանուր ջղագրգռութեան այս մթնոլորտում, երբ երևակայութեան թռիչքները մթագնում են զանգուածների գիտակցութիւնը, նման պրովոկասիոններն էլ կարող են վտանգաւոր լինել, եթէ բանիմաց մարդիկ ուշք չդարձնեն ժամանակին մերկացնելու նրանց իսկական նպատակները…

Ճամբորդութեանս ընթացքին բաւական հետաքրքրական տեղեկութիւններ քաղեցի Անդրկովկասի և մասնաւորապէս Հայաստանի գիւղացիական շարժումների վերաբերեալ: Բայց այդ մասին աւելորդ եմ համարում գրել, որովհետև դուք անշուշտ արդէն հաղորդագրութիւններ ստացած կը լինէք տեղական ընկերներից:

Ա.

## ՄՈՒՇԵՂ ՋԱՔԱՐԵԱՆ

Սոյն տարւայ ապրիլ 27-ին, Բիլաւի կռւում, հերոսաբար ընկել է Դարալագեազի գիւղացիական ապըստամբութեան ղեկավարներից՝ ընկեր Մուշեղ Ջաքարեանը:

Ծնել է 1895-ին, Վայոց Ձորի Այնազուր գիւղում: Աւարտել է Նոր-Բայազետի քաղաքային դպրոցը: Վերջին տարիները վարում էր գիւղական ուսուցչի համեստ պաշտօնը:

Յարգանք իր թարմ յիշատակին:


## «ԴՐՕՇԱԿ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Դրօշակ»-ի *տարեկան բաժնեգինն է՝*

Ֆրանսայի, Յունաստանի, Բուլղարիայի, Ռումանիայի, եւրոպական այլ երկրների և Սիւրիայի համար 25 ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի, ամբողջ Պարսկաստանի և մնացած բոլոր երկրների համար՝ երկու դոլար:


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Գրգռական Հարցը (*Խմբագրական*) . . . . . . 185
Գրգռական ռազմաբեմից . . . . . . . . . . 188
Գրգռական ապստամբութիւնը (*Կարօ Սասունի*) . . . . . . . . . . 191
Դարալագեազի ապստամբութիւնը (*Արուէն*) . . . 197
Եզրակացութիւններ (*Ա. Ջամալեան*) . . . . . . 199
Թիւրքիոյ շուրջ . . . . . . . . . . 202
Թղթակցութիւններ . . . . . . . . . . 205



«ԴՐՕՇԱԿ»-Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

«ԴՐՕՇԱԿ»-Ի հասցէն՝

M^lle^ S. AGOPIAN.

5, rue des Gobelins, 5. Paris (13^e^)

Imp. de Navarre, 5, rue des Gobelins, Paris.

Gérante: Delacouvellerie Hambartzoumian


digitised by A.R.A.R.@